# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

38ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ33 (1883) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 8, 2018
VOLUME 38, NO. 33 (1883) SATURDAY SEPTEMBER 8, 2018

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Թրամփի Սպիտակ Տունը

Այս օրերուն նոր գիրք մը լոյս տեսած է, որ անգամ մը եւս կու գայ հաստատելու թէ նախագահ Տանըլտ Թրամփ ատակ չէ իր պաշտօնին եւ չի տիրապետեր Սպիտակ Տունէն ներս ընթացող ամէնօրեայ զարգացումներուն, այն աստիճան որ, բարձրաստիճան պաշտօնեաներ յաճախ կ՛անտեսեն զինք ու հեգնանքով կը խօսին նախագահի մասին:

«Վախ» անունով գրքի հեղինակն է Ամերիկայի ամենէն յայտնի լրագրողներէն՝ Պոպ Ուտուըրտ, որ իր գործընկեր՝ Քարլ Պըրնսթընի հետ ժամանակին բացայայտած էին «Ուոթըրկայթի» սկնտալային փաստաթուղթերը, որոնք պատճառ դարձան նախագահ Նիքսընի անկումին եւ հրաժարականին:

Ուտուըրտ վստահելի լրագրող մը կը նկատուի, որ նման գիրքեր գրած է նախորդ նախագահներու ներքին խոհանոցի մասին եւս: Օրուայ վարչակազմերը միշտ ալ հերքած են իր գրածները, սակայն ժամանակը փաստած է որ, Ուտուըրտի աղբիւրները վստահելի էին եւ իր քաղած տեղեկութիւնները ճիշդ:

Ուտուըրտ կը պատմէ թէ, առիթով մը Թրամփ հեռաձայնած է պաշտպանութեան նախարար Ճէյմզ Մաթըսին, ըսելու համար, թէ պէտք է երթալ եւ սպաննել Սուրիոյ նախագահ Ասատին: Մաթիս պատասխանած է՝ «անմիջապէս»: Հեռաձայնը փակելէ ետք Մաթիս իր շուրջ եղողներուն ըսած է՝ «ոչ մէկ բան չենք ըներ»: Մաթիս նաեւ Թրամփը բնութագրած է որպէս 5-րդ-6-րդ դասարանի խելք ունեցող, երբ ան առաջարկած է կրճատել Ամերիկեան զինուորական ներկայութիւնը Հարաւային Գորէայի մէջ, որ պիտի վտանգէր Միացեալ Նահանգներու պաշտպանութիւնը՝ Հիւսիսային Քորէայի կողմէ յարձակման պարագային:

Ուտուըրտ նաեւ կը պատմէ թէ, Թրամփի բարձրաստիճան խորհրդականներէն Կէրի Քոհէն, նախագահի գրասեղանէն գողցած է հրամանագիր մը, որ ան կը պատրաստուէր ստորագրելու:

Տասնեակներով նման օրինակներ կան Ուտուըրտի գիրքին մէջ, որոնք կու գան անգամ մը եւս հաստատելու, որ Սպիտակ Տան ներկայ բնակիչը չունի համապատասխան կարողութիւն եւ իմացութիւն՝ ղեկավարելու այս մեծ երկիրը:

Երկու ամիս ետք պիտի կայանան կիսաշրջանի գոնկրէսական ընտրութիւնները: Կանխատեսումները կ՛երթան այն ուղղութեամբ, որ առնուազն Ներկայացուցիչներու Տունը պիտի անցնի Դեմոկրատական կուսակցութեան ձեռքը: Այդ պարագային Թրամփի շուրջ օղակը աւելի եւս պիտի սեղմուի: Իր շրջապատէն բազմաթիւ անձիք արդէն իսկ ամբաստանութեան տակ են եւ կամ ընդունած են իրենք յանցանքը, յատուկ քննիչ Ռոպըրթ Մուլըրի գլխաւորութեամբ ընթացող հետաքննութեան ծիրէն ներս:

Յառաջիկայ Նոյեմբեր 6-ին Ամերիկացի ժողովուրդը առիթ պիտի ունենայ մասամբ ուղղելու իր սխալը, երբ երկու տարի առաջ Տանըլտ Թրամփը ընտրեց նախագահ:

«ՄԱՍԻՍ»

## ՅՔԾ Աղմկայարոյց Բացայայտումներ կը Կատարէ Մարտի 1-ի Գործով



Արխիւային նկար 2008-ի Մարտի 1-2-ի դէպքերէն

*Հայաստանի Յատուկ Քննչական Ծառայութիւնը (ՅՔԾ) աղմկայարոյց նոր բացայայտումներ կատարեց Մարտի 1-ի գործով: Այդ բացայայտումը կը վերաբերի մասնաւորապէս, արխիւալի իրադարձութիւններու առանցքային դրուագներէն մէկուն՝ Ազատութեան հրապարակէն ցուցարարները ցրելու օրինականութեան:*

*Յատուկ Քննչական Ծառայութիւնը կը պնդէ, որ այն ժամանակուան ոստիկանութեան բարձրաստիճան պաշտօնեաները Ազատութեան հրապարակի մէջ գիշերող ցուցարարները բռնի ուժով հեռացնելու հակաօրինական գործողութիւններուն համար փաստաթուղթեր կեղծած են՝ յայտնելով, թէ իբր հրապարակին մէջ զէնքի ու պայթուցիկ նիւթերու առկայութեան մասին ահազանգեր ստացած են: Յարուցուած է քրէական գործ, անուններ առայժմ չեն նշուած:*

*Ըստ Յատուկ Քննչական Ծառայութեան, փաստահաւաք խումբին ներկայացուցած կեղծ փաստաթուղթերուն մէջ, բարձրաստիճան ոստիկանները իրենց հակաօրինական գործողութիւնները քողարկելու եւ պատասխանատուութենէն խուսափելու համար, նշած են, թէ ահազանգերը ստուգելու նպատակով, առաւօտեան ժամը 7-ին փորձած են զննել տեղանքը, սակայն հանդիպած են ցուցարարներու դի-*

Շար.ը էջ 5

## Հայաստան, Արցախ եւ սփիւռքը այսօր աւելի ուժեղ են, քանի որ աւելի միասնական են եւ աւելի ազատ. Փաշինեան

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան ուղերձ յղած է Հայ ժողովուրդին՝ յայտնելով որ Հայաստանը, Արցախն ու սփիւռքը այսօր աւելի ուժեղ են, որովհետեւ աւելի միասնական են եւ աւելի ազատ*

*Իր ուղերձին մէջ վարչապետը յատկապէս ըսած է. - «Արցախի Հանրապետութեան եւ Արցախի հասարակութեան բազմակողմանի զարգացումը ողջ հայութեան կարեւորագոյն նպատակներից է եղել եւ այսուհետ եւս լինելու է»:*

*«Արցախի անվտանգութիւնը մեր ամենօրեայ ուշադրութեան կեդրոնում է: Արցախի ճակատագիրը համայն հայութեան գուրգուրանքի առարկան է: Այդպէս է լինելու այնքան ժամանակ, քանի դեռ չենք յանգել խնդրի խաղաղ եւ արդարացի լուծման», - աւելցուցած է Նիկոլ Փաշինեանը:*

*Սեպտեմբեր 2, 1991-ին ժողովրդական պատգամաւորներու Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդներու համատեղ նստաշրջանը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը (ԼՂՀ) նախկին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) եւ Շահումեանի շրջանի սահմաններուն մէջ:*

## ՀԱԽ-ի Պատասխանը «Ուաշինկթըն Թայմզ» Թերթի Ապատեղեկատուութեան


The Washington Times | HOME | NEWS | OPINION | SPORTS | MARKET | SUBSCRIBE

HOME \ NEWS \ THREAT ASSESSMENT

Vendettas In Armenia

Robert Kocharyan, former president, arrested and released 2 weeks later

Search | GO

RECOMMENDED

Jim Jordan speaker bid excites conservatives: 'The grassroots is starving for principled leadership'

Quiz: How well do you know your guns?

Cody Wilson has sold thousands of 3D gun blueprints: 'The news was well-received'

8 Cars So Cool It's Hard to Believe They Cost Under $20k

*Ամերիկեան «Ուաշինկթըն Թայմզ» թերթը անցեալ շաբաթ հրատարակած էր յօդուած մը, Լ. Թատ Ուուտի ստորագրութեամբ՝ «Նիկոլ Փաշինեանի Վենտեթան եւ Օրէնքի Գերակայութեան Վերացումը» խորագրին տակ:*

*«Ուաշինկթըն Թայմզ« ծանօթ է որպէս Ամերիկեան պահպանողական շրջանակներու բանբեր, որ նաեւ կը նկատուի թրքական վարձու լոպպիստական կազմակերպութիւններուն մօտ հրատարակութիւն մը:*

*Յօդուածը Ռոբերդ Քոչարեանի պաշտպանութեան եւ արդա-*

Շար.ը էջ 5

## Գերմանիոյ մէջ կանգնեցուած Էրտողանի արձանը Վար Առնուած է

*Գերմանիոյ Ուիսպատըն քաղաքին մէջ Օգոստոս 27-ին բացուած արուեստի փառատօնի շրջագիծէն ներս տեղադրուած Էրտողանի ոսկեգոյն արձանը առաւօտ կանուխ հեռացուած է: Իշխանութիւններն ըսած են, որ արձանը հանելու որոշումն ընդունուած է անվտանգութեան նկատառումներէն ելլելով, քանի որ այդ վայրը դարձած է Էրտողանը պաշտպանողներու եւ անոր հակառակորդներուն հաւաքատեղի: Էրտողանի չորս մեթրանոց արձանին վրայ անյայտ մարդիկ գրած էին «Թուրք Հիթլեր»:*

*Ոստիկանութիւնը ըսած է, որ այլեւս չի կրնար երաշխաւորել քաղաքացիներուն անվտանգութիւնը եւ առաւօտեան, լոյսը դեռ չբացուած, վերամբարձ կռունկի միջոցով հրապարակներէն մէկուն մէջ տեղադրուած Էրտողանի արձանը հանուած է:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Տիգրոնի Սինդրոմը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍԵԱՆ

*Ռուսական լրատուամիջոցների տուած հարցազրոյցներում երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը Հայաստանի նոր իշխանութիւններին անուղղակի կամ տողատակով մեղադրել է արեւմտեան ազդեցութեան «գործակալ» լինելու մէջ: Թերեւս հենց դրա դիմաց է, որ Ռուսաստանի նախագահ Պուտինը տասնամեայ ընդմիջումից յետոյ նրան շնորհաւորել է ծննդեան օրուայ կապակցութեամբ, ինչը քաղաքական եւ փորձագիտական որոշակի շրջանակների եւ սոցցանցերի օգտատերերի թոյլ է տուել եզրահանգել, որ «Մոսկուան Քոչարեանի վրայ լուրջ խաղադրոյք է դրել»:*

*Պատկերաւոր ասած՝ գործ ունենք Տիգրոնի սինդրոմի հետ, եւ ատրպէյճանական մամուլն էլ հաճոյքով տարածած տեղեկատուութիւնը, թէ Պուտինը ռուսաստանաբնակ հայ մեծահարուստներին «անձամբ արգելել է կոպեկ իսկ տրամադրել Հայաստանի կառավարութեանը»:*

*Հայրենի իշխանութիւններին կարելի է նաեւ չսիրել, լինել ընդդիմախօս: Բայց դա չի նշանակում, թէ ամէն անգամ պէտք է շտապել Մոսկուա, գտնել Պուտինի շրջապատից մէկին եւ ականջին փսփսալ, որ Փաշինեանի կառավարութիւնը «սորոսական է»: Երկրորդ նախագահն ու նրա թիմակիցները, ցաւօք, կարծես թէ այդ ընտրութիւնն են կատարել, եւ նրանցից ոմանք իրենց մղումներում այնքան են առաջ գնացել, որ Պուտինից «աւելի լաւ են հասկանում եւ պաշտպանում» Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերը: Հասկանու՞մ են Մոսկուայում, որ այդ մարդիկ չեն կարող Ռուսաստանի բարեկամը լինել՝ կարելի է միայն ենթադրութիւններ անել: Տրամաբանական է թւում, որ սեփական երկրի շահերը դաւող մարդն այլ պետութեան առաջնորդի յարգանքը չպէտք է վայելի: Ռուսաստանը նրանց կարող է միայն օգտագործել այնքանով, որքանով որ հնարաւոր է ճնշումներ գործադրել Հայաստանի նոր իշխանութիւնների վրայ:*

*Հիմնական խնդիրը դա է, քանի որ նոր Հայաստանը փորձում է Ռուսաստանի հետ ունենալ իրաւահաւասար եւ փոխադարձ յարգանքի հիման վրայ կառուցուած յարաբերութիւններ: Դա արդարացի նպատակադրուածութիւն է: Հակառակ դէպքում Հայաստանը կը կորցնի միջազգային սուբիեկտութիւնը, եւ մեր խնդիրները կը լուծուեն երրորդ-չորրորդ երկրների միջեւ պայմանաւորուածութիւններով: Ինչպէս որ եղաւ Արշակունեաց Հայաստանի դէպքում, երբ Տիգրոնի սինդրոմը կատարեց իր կործանիչ դերը, եւ Պարսկաստանն ու Բիւզանդիան իրար միջեւ կիսեցին մեր հայրենիքը: Այսօր որոշ ուժեր մղւում են դէպի Մոսկուա: Նպատակը մէկն է՝ տապալել Փաշինեանի կառավարութիւնը, հասնել ռեւանշի: Օտար միջամտութեամբ սեփական տան հարցերը լուծելու գայթակղութիւնը կարող է աղէտալի լինել: Խնդիրն այս կամ այն ուժի ապազգան չէ, այլ՝ Հայաստանի՝ որպէս անկախ եւ ինքնիշխան պետութեան հեռանկարը: Այս իրողութիւնը պէտք է առաջնորդի թէ իշխանութիւններին, որոնք պարտաւոր են զսպել «յեղափոխական էյֆորիան», թէ նրանց ընդդիմախօսներին: Նրանք էլ իրենց հերթին պարտաւոր են գիտակցել, որ իշխանութեան վերադառնալու մոլուցքը կարող է մեծ աւերածութիւններ գործել եւ սասանել Հայաստանի պետականութիւնը:*

*Սեփական տան հարցերը պէտք է լուծուեն ներքին միջոցներով: Այլապէս Տիգրոնը կը լուծի բոլորի հարցերը, եւ մեր հայրենիքը կը վերածուի «մարզպանութեան»:*

*«ՀՐԱՊԱՐԱԿ»*

# Պուտինի Զանգը Քոչարեանին Չփրկեց. Նա Չի Կարող Լքել Հայաստանը

*Յատուկ քննչական ծառայութիւնն այսօր որոշում է կայացրել երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանի նկատմամբ սահմանել ստորագրութիւն չհեռանալու մասին խափանման միջոցը: Երէկ սահմանադրական կարգը տապալելու մէջ մեղադրուող նախկին նախագահի փաստաբան Արամ Օրբելեանն ասել էր, որ Քոչարեանը մտադիր է մեկնել Գերմանիա՝ տարեկան բժշկական հետազօտութեան, սակայն նախաքննական մարմնի կողմից կայ իրաւական արգելք, եւ որ պաշտպանական կողմը այժմ զբաղուած է այդ արգելքի վերացման աշխատանքներով: «Խօսքն այն մասին է, որ Քոչարեանի նկատմամբ չկայ ընտրուած խափանման միջոց, բայց նախկին նախագահի անձնագիրը գտնւում է իրաւապահների մօտ»,- ասել էր փաստաբանը:*

*Գործ ունենք իրավիճակի հետ, որտեղ ՀՔԾ-ն գործեց բաւականին ճկուն՝ փաստի առաջ կանգնեցնելով պաշտպանական կողմին: Կասկածից վեր է, որ առաջիկայ օրերին պաշտպաններն աղմուկ էին բարձրացնելու, թէ Հայաստանում սահմանափակւում է մարդու տեղաշարժի հնարաւորութիւնը՝ յղում անելով այն փաստին, որ Քոչարեանի նկատմամբ չկայ ընտրուած խափանման միջոց: ՀՔԾ-ն, փաստօրէն, այսօր վերացրել է այդ բացը՝ Քոչարեանի նկատմամբ սահմանել է ստորագրութիւն չհեռանալու մասին խափանման միջոցը: Նախաքննութեան մարմինը ստեղծել է բոլոր իրաւական հիմքերը՝ թոյլ չտալով, որ երկրորդ նախագահը հեռանայ Հայաստանի տարածքից, միեւնոյն ժամանակ՝ փակելով տարբեր տեսակի քարոզչական մանիպուլյացիաների ճանապարհը:*

*ՀՔԾ-ն՝ իր այսօրուայ որոշմամբ, անշուշտ, վերականգնել է նաեւ արդարութեան սկզբունքը. անհեթեթ է, երբ մարդուն մեղսագրուել է նման ծանր մեղադրանք, սակայն նրա նկատմամբ ընտրուած չէր խափանման միջոց, այլ խօսքով՝ որեւէ կերպ սահմանափակուած չէր նրա տեղաշարժուելու հնարաւորութիւնը: Սա, մի կողմից, էապէս կարող էր խոչընդոտել նախաքննութեան բնականոն ընթացքին՝ յատկապէս այն դէպքում, երբ ՀՔԾ-ն պնդում է, որ նախաքննութեան բնականոնութիւնը խաթարուած է անգամ երկրորդ նախագահի ազատութեան մէջ գտնուելու պարագայում, միւս կողմից՝ Քոչարեանը ցանկացած պահի կարող էր ճողոպրել արդարադատութիւնից: Որեւէ մէկը, օրինակ, չէր կարող երաշխիք տալ, որ Քոչարեանը Գերմանիա մեկնելուց յետոյ վերադառնալու է Հայաստան, մանաւանդ որ Մարտի 1-ի գործով արդէն կայ մեղադրեալի նախադէպ, որը Ռուսաստանում է ու լուրջ պրոբլեմներ են առաջացել նրա արտահանձնման հարցում:*

*Կայ մէկ այլ ուշագրաւ հանգամանք: ՀՔԾ-ն երեկ Մարտի 1-ի գործի շրջանակներում նոր քրէական գործ յարուցեց, որը վերաբերում է 2008-ի Մարտի 1-ի առաւօտեան Ազատութեան հրապարակում ոստիկանութեան ծաւալած ապօրինի գործողութիւններին: Ակնյայտ է, որ ոստիկանութիւնը նոյնպէս ցուցումները ստացել է Ռոբերտ Քոչարեանից ու, ըստ ամենայնի, առաջիկայում երկրորդ նախագահի մեղադրանքն աւելի խստացուելու է: Կարծում ենք՝ ՀՔԾ այսօրուայ որոշումը տեղաւորւում է նաեւ այդ տրամաբանութեան մէջ:*

*Միւս կողմից՝ խիստ բնական է, որ ՀՔԾ-ն սահմանափակում է արտերկիր մեկնելու Քոչարեանի իրաւունքը, եթէ հաշուի առնենք այն հանգամանքը, որ գլխաւոր դատախազութիւնը վիճարկել է Վերաքննիչ դատարանի որոշումը, ու առաջիկայ շաբաթներին Վճռաբեկ դատարանը քննարկելու է Քոչարեանին կալանաւորելու հարցը:*

*Սակայն իրաւականից զատ՝ խնդիրն ունի հսկայական քաղաքական նշանակութիւն: Վլադիմիր Պուտինի յայտնի հեռախօսազանգից յետոյ Քոչարեանի թիմը փորձում էր հանրային կարծիք ձեւաւորել, որ երկրորդ նախագահի հարցերը Մոսկուան կարգաւորել է, ու Հայաստանում որեւէ մէկը չի համարձակուի նրա հասցէին որեւէ «թթու խօսք» ասել: ՀՔԾ-ն այսօր ապացուցեց, որ Հայաստանում որեւէ մէկն այլեւս «անձեռնմխելի» չէ, եթէ նոյնիսկ Պուտինի ընկերն է ու նրանից շնորհաւորական զանգ կամ բացիկ է ստանում:*

*Խիստ ուշագրաւ է, որ ՀՔԾ որոշումը նախորդում է Նիկոլ Փաշինեանի մոսկովեան այցին: Հայաստանի վարչապետը Պուտինին, ըստ էութեան, հասկացնում է, որ հանդիպման է մեկնում՝ հաւասար բանակցութիւնների, առանց ռուսական պայմաններն ընդունելու:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

# Նոր Թիմի Դէմ Խաղ Կայ, Հայկ, եւ Այդ Խաղն Արդէն Սկսուած է

*Սեպտեմբերի 2-ին «Իմ քայլը» դաշինքը դրամահաւաք երեկոյ էր կազմակերպել, որի ժամանակ ելոյթ էր ունեցել դաշինքից Երեւանի քաղաքապետի թեկնածու առաջադրուած Հայկ Մարութեանը: Նա մի շարք սկանդալային յայտարարութիւններ է արել, որոնք գուցէ կարելի է վերագրել նրա «դերասանական պաթոսին», բայց քաղաքական տեսանկիւնից գուցէ արտայայտում է որոշակի տրամադրութիւններ:*

*Մարութեանը մասնաւորապէս նշել է, որ «Այսօր Հայաստանում իրավիճակը շատ պարզ է. կան սպիտակ ուժեր եւ կան սեւ ուժեր, վերջ: Ես ուզում եմ պաշտօնական յայտարարել, չնայած գիտէք, բայց պէտք է ասեմ, այո՛, մենք սպիտակ ուժերն ենք, իսկ բոլոր նրանք, ովքեր չեն ուզում, որ մենք յաջողութիւն ունենանք, ես կարող եմ ասել, որ սեւ ուժերն են»:*

*Նա ասել է նաեւ, որ իրենց թիմը ուժեղ է, «Նոյնիսկ կարող եմ ասել՝ մեր թիմի դէմը խաղ չկայ»:*

*Ծանօթ խօսքեր են, մեր ոչ վաղ անցեալից: Սեւ-սպիտակի տրամաբանութիւնը, որ ներդնում էին Հայաստանի այսպէս կոչուած քաղաքական ուժերը՝ իշխանական թէ ընդդիմադիր, ամենապարզ ձեւն էր հանրային գիտակցութեան մանիպուլիացիայի ու սեփական բնոյթը եւ մոտիւացիան քօղարկելու համար:*

*Հիմա դա կրկնում է յեղափոխութեամբ իշխանութեան եկած թիմի անդամը, որը պատրաստւում է դառնալ Երեւանի քաղաքապետ: Եւ ընտրութիւնները փաստացի հերթական անգամ յայտարարւում են սեւ-սպիտակի տրամաբանութեամբ միջոցառում:*

*Նոր իշխանութեանը շատերն են մեղադրում այն բանում, որ այն չի տարբերւում նախորդ վարչակարգից, որ մօտեցումները նոյնն են: Դրանում իհարկէ կայ ռացիոնալ բան՝ այս երեք ամիսների ընթացքում նոր իշխանութիւնը չի ներկայացրել բարեփոխումների, համակարգային փոփոխութիւնների որեւէ ռազմավարութիւն, իսկ նրա քայլերը գնալով աւելի շատ են տեղաւորւում նախընտրական տրամաբանութեան մէջ:*

Շար.ը էջ 6

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### Ամենաուշը 2019-ի Մայիս-Յունիս Ամիսներուն Պէտք է Տեղի Ունենան Արտահերթ Խորհրդարանական Ընտրութիւններ. Փաշինեան



Ինչպէս եւ պայմանաւորուած ենք ամենաուշը միւս տարուան Մայիսին կամ Յունիսի առաջին տասնօրեակին Հայաստանի մէջ պէտք է տեղի ունենան արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ, յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ ուղիղ եթերի ժամանկ պատասխանելով Ֆէյսպուքի օգտատէրերու հարցումներուն:

«Մենք հիմա աշխատում ենք սահմանադրական փոփոխութիւնների վրայ: Ըստ էութեան փաթեթը շուտով պատրաստ կը լինի եւ մենք այն կուղարկենք խորհրդարան եւ այս համաթեքսթում կ՛ունենանք քաղաքական քննարկումներ, եւ ի վերջոյ նաեւ ժողովրդի հետ քննարկումների արդիւնքում կը գանք ընդհանուր որոշումների», -յայտարարած է վարչապետը: -«Ինչպէս եւ պայմանաւորուել ենք ամենաուշը միւս տարուայ Մայիսին կամ Յունիսի առաջին տասնօրեակում Հայաստանում պէտք է տեղի ունենան արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ: Իհարկէ, ասուած է մէկ տարուայ ընթացքում, եւ դա մեծապէս կախուած է քաղաքական իրավիճակից, իսկ այդ քաղաքական իրավիճակում բոլոր դէպքերում հիմնական թելադրող քաղաքական ուժը լինելու է ՀՀ քաղաքացին»:

### Շանթ Յարութիւնեանը Ազատ Կ՛արձակուի, Եթէ Ստորագրէ Որոշ Փաստաթուղթեր



Շանթ Յարութիւնեան

Շանթ Յարութիւնեանը եւ խումբը ազատ արձակելու հարցին մէջ կառավարութեան ունեցած միակ օրինական լծակը կալանքի ռեժիմը փոխելն է: Այս մասին իր ֆէյսպուքեան էջին մէջ գրած է վարչապետ Նիկոլ Փաշինեանի մամլոյ խօսնակ Արման Եղոյեանը՝ անդրադառնալով 5 տարի առաջ «արժէքների յեղափոխութեան» դուրս եկած եւ խուլիկանութեան մեղադրանքով 6 տարուան ազատազրկման դատապարտուած Շանթ Յարութիւնեանի հարցին:

Շանթ Յարութիւնեանի որդին, Շահէն Յարութիւնեանը, «Ֆէյսպուքի» ուղիղ եթերին ժամանակ պնդած էր, թէ նոր իշխանութիւնը պատշաճ ուշադրութիւն չի դարձներ իր հօր գործին: Մինչդեռ, վարչապետի մամլոյ քարտուղարի խօսքով՝ վարչապետ ընտրուելու առաջին իսկ օրերէն Նիկոլ Փաշինեանը զբաղուած է այդ հարցով:

«Կայացուել է որոշում Շանթ Յարութիւնեանի, նրա գործով դատապարտուած Վարդան Վարդանեանի եւ Լիպարիտ Պետրոսեանի պահման պայմանները փոխել կիսաբացից բաց ռեժիմի, այնպէս, որ նրանք փաստացի լինեն ազատութեան մէջ, ինչից օգտուել են Վարդան Վարդանեանը եւ Լիպարիտ Պետրոսեանը: Շանթ Յարութիւնեանը հրաժարուել է նման որոշմամբ դուրս գալ բանտից՝ պահանջելով իրեն արդարացնել », - գրած է Եղոյեանը:

### Նայիրի Յունանեանը Դատապարտման Օրուընէ ի Վեր կը Գտնուի «Երեւան-Կեդրոն» ՔԿՀ-ի Մէջ



Նայիրի Յունանեան

ՀՀ արդարադատութեան նախարարութեան քրէակատարողական ծառայութիւնը պարզաբանում տարածած է ցմահ ազատազրկման դատապարտուած Նայիրի Յունանեանի գտնուելու վայրի վերաբերեալ:

ՀՀ Արդարադատութեան նախարարութեան քրէակատարողական ծառայութեան հանրային կապերու բաժնի պարզաբանման մէջ ըսուած է. «Վերջին օրերին զանգուածային լրատուամիջոցներով աքթիւօրէն տեղեկատուութիւն է շրջանառւում Նայիրի Յունանեանի գտնուելու վայրի մասին:

Վերոգրեալի կապակցութեամբ հարկ ենք համարում յայտնել, որ ցմահ ազատազրկման դատապարտուած Նայիրի Յունանեանը դատապարտման օրուանից տեղաբաշխուել է ՀՀ ԱՆ «Երեւան-Կեդրոն» քրէակատարողական հիմնարկի փակ տեսակի ուղղիչ հիմնարկ, որտեղ էլ առ այսօր կրում է իր պատիժը»:

### Վանեցեան.- ԱԱԾ-ն Ոչ Թէ Հանգիստ է, Այլ ԱԱԾ-ն Ուղղակի Հրապարակում Չընէր



ԱԱԾ տնօրէն Արթուր Վանեցեան

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) ոչ թէ հանգիստ է, այլ ԱԱԾ-ն ուղղակի հրապարակում չընէր, այսպէս արձագանգած է ԱԱԾ տնօրէն Արթուր Վանեցեանը, լրագրողներու դիտարկման, թէ վերջին շրջանին Ազգային անվտանգութեան ծառայութիւնն աւելի հանգիստ է:

«Ես ի սկզբանէ ասել եմ, որ ես ճիշդ չեմ համարում ԱԱԾ-ի հրապարակային աշխատանքը, բայց, ստեղծուած իրավիճակից ելնելով, սկզբնական շրջանում հետաքրքրութիւնը շատ մեծ էր եւ հրապարակայնութիւնը շատ-շատ էր: Կամաց-կամաց, յարգելի լրագրողներ, կը սովորէք, որ ես էլ հարցազրոյց չեմ տալու, չեմ երեւալու: Գործերի մասին ասելու եմ, բայց թոյլատրելիի սահմաններում», -Արտակարգ իրավիճակներու նախարարութեան (ԱԻՆ) 27-ամեակին նուիրուած միջոցառման յաջորդած ճեպազրոյցի ժամանակ ըսած է Վանեցեանը:

Հարցին, թէ այդ ի՞ր որոշումը եղած է, որ բաց չըլլան, ԱԱԾ տնօրէնը պատասխանած է. - «Իմ որոշումն է եղել: Ջէ, բայց բաց լինելու եմ, խնդրում եմ չշփոթել, ուղղակի փորձելու ենք հնարաւորինս սահմանափակել հարցազրոյցները, որովհետեւ ես կարծում եմ, որ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան տնօրէնի պաշտօնն այդքան չպէտք է հրապարակային լինի»:

Ի պատասխան ճշդող հարցի, թէ փակ ըլլալ ըսելով ի՞նչ նկատի ունի, նոր բացայայտումներու մասին պիտի չյայտարարուի՞, Վանեցեանը պարզաբանած է. - «Այ էսպէս չեմ կանգնելու հարցազրոյցներ տամ, իսկ գործերի մասով անպայման խօսելու ենք»:

### Վլատիմիր Գասպարեանի Առանձնատան Հարցով Քրէական Գործ Յարուցուած է



Հայաստանի
նախկին ոստիկանապետ
Վլատիմիր Գասպարեան

Հայաստանի ոստիկանութեան նախկին պետ Վլատիմիր Գասպարեանի առանձնատան վերաբերեալ հրապարակման հիման վրայ քրէական գործ յարուցուած է, այս մասին հաղորդած է Յատուկ քննչական ծառայութիւնը:

« Hetq.am լրատուական կայքի մէջ հրապարակուած «Վլատիմիր Գասպարեանը 200 հազար տոլարով դարձել է 3 միլիոն տոլարանոց առանձնատան տէր» վերտառութեամբ օդուածի հիման վրայ նախապատրաստուած նիւթերով ՀՀ Յատուկ քննչական ծառայութիւնը յարուցած է քրէական գործ:

Hetq.am-ի հրապարակման համաձայն, Երեւանի Յաղթանակ զբօսայգիի հարեւանութեամբ տեղակայուած՝ ժամանակին 3-4 միլիոն շուկայական արժէքով առանձնատունը, որուն մէջ իր ընտանիքին հետ կ՛ապրի Վլատիմիր Գասպարեանը, գրաւ դրուած էր «Ամերիապանք»-ի մէջ 1 միլիոն 800 հազար տոլար արժէքով, սակայն զանազան գործարքներու արդիւնքով Գասպարեանն այն ձեռք ձգած է մօտ 200 հազար տոլարով:

### Կը Պահանջեն Ընտրական Յանձնաժողովի եւ Հեռուստատեսութեան Ղեկավարներու Հրաժարականը

Աւելի քան երեք տասնեակ հասարակական կազմակերպութիւններ յայտարարած են, որ ընտրութիւններէն առաջ անհրաժեշտ է, որ կեդրոնական ընտրական յանձնաժողովի, նաեւ Հեռուստատեսութեան եւ ռատիոյի յանձնաժողովի ղեկավարները հրաժարական ներկայացնեն, որպէսզի բարձրանայ ընտրութիւններու հանդէպ հանրային վստահութեան մակարդակը:

«Կարծում ենք, որ առնուազն ղեկավարի մակարդակով ԿԸՅ-ում եւ ՀՌՅ-ում փոփոխութիւն պէտք է լինի: Այն ասոցիացիաները, որոնք կային, այն վատ պատմութիւնները, որ կան այդ կառոյցների հետ կապուած, շատ յաճախ անձնաւորուում են ղեկավարների մակարդակով: Փոփոխութիւնը պէտք է, որ ընտրութիւնները չստուերուեն»,- «Ազատութեան» ըսած է համատեղ յայտարարութիւնը ստորագրած ՀԿ-ներէն՝ «Թրանսփարընսի ինթըրնաշընլ» հակակաշառակերութեան կեդրոնի գործադիր տնօրէն Սոնա Այվազեանը:

Յայտարարութեան տակ ստորագրած՝ քաղաքացիական հասարակութիւնը ներկայացնող 34 կազմարեկութիւնները գրած են, թէ հաւանական կը համարեն, որ նոր իրավիճակին մէջ, յեղափոխութենէն ետք, Կեդրոնական ընտրական յանձնաժողովն ու Հեռուստատեսութեան եւ ռատիոյի յանձնաժողովը (ՀՌՅ), այնուամենայնիւ, իրականցնեն օրէնքով իրենց վերապահուած գործառոյթները, սակայն անհնար է մոռնալ անոնց նախկին գործելաոճը, հետեւաբար վարկաբեկուած պաշտօնեաները պէտք է հեռանան, նշած են Հասարակական կազմակերպութիւնները:

## ԼՈՒՐԵՐ

# Օտարերկրեայ Ուղղակի Ներդրումներու Ծաւալը Աճած է

*Հայաստանի տնտեսութեան մէջ կատարուած օտարերկրեայ ուղղակի ներդրումները նկատելիօրէն աճած են: Ազգային Վիճակագրական Ծառայութեան հրապարակած տուեալներուն համաձայն, այս տարուան առաջին կիսամեակին տնտեսութեան իրական հատուածին մէջ եղած օտարերկրեայ ուղղակի ներդրումներու ծաւալը գրեթէ 2,5 անգամ աւելի է նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին արձանագրուած ցուցանիշին համեմատ:*

*2018 թուականի Յունուար-Յունիսին իրական հատուածին մէջ եղած օտարերկրեայ ուղղակի ներդրումները կազմած են 39 միլիառ 196 միլիոն դրամ կամ 81,3 միլիոն տոլար: 2017 թուականի Յունուար-Յունիսին ներդրումները կազմած էին 15 միլիառ 844 միլիոն դրամ կամ 32,6 միլիոն տոլար: Տնտեսագէտ, «Հայ Ազգային Կոնկրէսի» ներկայացուցիչ Վահագն Խաչատրեանի կարծիքով, օտարերկրեայ ուղղակի ներդրումներու աճը կը վկայէ, որ գործարար հանրութիւնը ոչ միայն դրական արձագանգած է հայաստանեան յեղափոխութեան, այլեւ կը վստահի նոր կառավարութեան:*

*«Այս թուերը նշանակում են, որ քաղաքական իրադարձութիւնների բացասական ազդեցութիւնը ներդրումների վրայ էական չի եղել, ինչպէս սովորաբար լինում է»,- «Ազատութեան» ըսած է Վահագն Խաչատրեանը: Վերջինիս խօսքով, սակայն, կիսամեակի համար ներդրումներու՝ 80 միլիոն տոլարը քիչ մը գերազանցող ծաւալը շատ քիչ է անգամ Հայաստանի տնտեսութեան համար: «Դա ոչինչ է, եթէ անգամ տարեկան կտրուածքով դա կազմի 300 միլիոն տոլար: Մեր հարեւաններից մէկի մօտ 1 միլիառ 200 միլիոն տոլար են կազմել ներդրումները, միւսի մօտ՝ 2,5 միլիառ տոլար: Բայց հաշուի առնելով, որ մեզ մօտ միտումը բացասական չէ, կարող ենք ասել, որ գոնէ դրական ինչ-որ բան ունենք»,- ըսած է տնտեսագէտը:*

*Ան յոյս յայտնած է, որ այն բարեփոխումները, որ կը փորձէ կեանքի կոչել Հայաստանի Նոր կառավարութիւնը, յառաջիկային կու տան իրենց արդիւնքը, եւ երկիրը կը ստանայ աւելի լուրջ ծաւալի ներդրումներ:*

# Հայաստան Այցելած Զբօսաշրջիկներուն Թիւը 10,2 Տոկոսով Աւելցած է

*2018 թուականի առաջին կիսամեակին Հայաստան այցելած է 685 հազար 970 զբօսաշրջիկ, ինչը նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ աճած է 10.2 տոկոսով: Այս մասին ամփոփելով պաշտօնավարման 100 օրն՝ ըսած է ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարար Արծուիկ Մինասեանը:*

*Նախարարը յայտնած է, որ զբօսաշրջութեան նպատակով հանրապետութենէն մեկնած է 610 հազար 900 մարդ՝ նախորդ տարուան համեմատ աճելով 7.1 տոկոս:*

*«Ժամանած ու մեկնած զբօսաշրջիկների տարբերութիւնը կազմել է շուրջ 75 հազար մարդ: Նախորդ տարի այս ցուցանիշը 52 հազար էր»,- նշած է ան:*

*Արծուիկ Մինասեանի խօսքով՝ զբօսաշրջիկներու շուրջ 27.1 տոկոսը եղած է Անկախ Պետութիւններու Համագործակցութիւն (ԱՊՀ) երկիրներէն, որ նախորդ տարուան համեմատ աճած է 17.4 տոկոսով:*

*Զբօսաշրջիկներու 24 տոկոսը Հայաստան այցելած է Եւրոպական Միութեան անդամ երկիրներէն. այստեղ աճը կազմած է 43.3 տոկոս: «Հայաստան այցելած զբօսաշրջիկների 48.9 տոկոսը բաժին է ընկնում այլ երկրներին: Այստեղ աճը կազմել է 8.1 տոկոս»,- ըսած է տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարարը:*

*Նշուած է նաեւ, որ զբօսաշրջիկներու 52,5 տոկոսը Հայաստան եկած է հանգիստի եւ ժամանցի նպատակով, 22,9 տոկոսը՝ գործնական նպատակով, 1,5 տոկոսը՝ բուժման նպատակով:*

*Ինչ կը վերաբերի ներքին զբօսաշրջութեան, ապա այստեղ արձանագրուած է 17,1 տոկոսով աճ: Ներքին զբօսաշրջութեան կառուցուածքին մէջ, ըստ Արծուիկ Մինասեանի, 69.9 տոկոսը բաժին ինկած է հանգիստին եւ ժամանցին:*

# Ռուսաստանը Պաշտպանութեան Նախկին Նախարար Միքայէլ Յարութիւնեանը Պիտի Չարտայանձնէ Հայաստանին

*Մոսկուան Երեւանէն պաշտօնական դիմում ստացած է՝ 2008-ի Մարտի 1-ի դէպքերու քրէական գործով Անկախ պետութիւններու համագործակցութեան (ԱՊՀ) երկիրներու միջպետաԱկան որոնման մէջ գտնուող Հայաստանի նախկին պաշտպանութեան նախարար Միքայէլ Յարութիւնեանի յանձնման վերաբերեալ: Այս մասին յայտնած է «Ինթըրֆաքս» գործակալութիւնը:*

*«ՌԴ իրաւապահ մարմինները Հայաստանի պաշտպանութեան նախկին նախարար Միքայէլ Յարութիւնեանը արտայանձնելու մասին հարցում ստացած է, եւ այժմ այն կը գտնուի քննարկման փուլի մէջ»,- ըսած է գործակալութեան զրուցակիցը:*

*«Նախնական որոշում կայացուած է, որ արտայանձնումը պիտի մերժուի, քանի որ հաստատուած է, որ 2002 թուականէն Միքայէլ Յարութիւնեանն ունի ռուսական անձնագիր»,- յայտնած է աղբիւրը՝ յիշեցնելով, որ Սահմանադրութեան համաձայն, Ռուսաստանի քաղաքացիները չեն արտահանուիր օտարերկրեայ պետութիւններ, այդ շարքին, քրէական պատասխանատուութեան ենթարկելու համար:*

*ՀՀ գլխաւոր դատախազութիւնը դեռեւս տուեալներ չունի ՌԴ-ի կամ որեւէ այլ տեղ Միքայէլ Յարութիւնեանին յայտնաբերելու մասին:*

# Փութին-Ալիեւ Հանդիպումէն Մէկ Շաբաթ Անց ՌԴ Ղեկավարը Պիտի Հանդիպի Փաշինեանին Հետ



Նիկոլ Փաշինեան



Վլատիմիր Փութին

*Հայաստանի եւ Ռուսաստանի ղեկավարներու բանակցութիւնները տեղի պիտի ունենան Մոսկուայի մէջ, Սեպտեմբերի 8-ին: Այս մասին ռուսական «Իզվեսթիա» պարբերականին յայտնած է Ռուսաստանի նախագահի մամլոյ քարտուղար Տմիթրի Փեսքովը:*

*«Իզվեսթիա» թերթն ընդգծած է, որ վարչապետ ընտրուելէ ետք Նիկոլ Փաշինեանն արդէն երրորդ անգամն է, որ պիտի հանդիպի Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինին հետ: Առաջին անգամ անոնք հանդիպած էին Մայիսին 14-ին Սոչիի մէջ, Եւրասիական Տնտեսական Միութեան գագաթնաժողովի շրջագիծէն ներս: Երկրորդ հանդիպումը կայացած էր Յուլիսի 13-ին Մոսկուայի մէջ՝ ֆութպոլի աշխարհի առաջնութեան բացման արարողութեան ժամանակ: Երկու հանդիպումներն ալ, ըստ էութեան, կարճատեւ էին, կայացած տարբեր հաւաքներու ժամանակ: Շաբաթ օր սպասուող հանդիպումը, փաստօրէն, պիտի ըլլայ երկու երկիրներու ղեկավարներու առաջին լիարժէք գագաթնաժողովը:*

*Հանդիպման պաշտօնական օրակարգը դեռ կողմերը չեն հրապարակած, սակայն շատերը կը կանխատեսեն, որ առանցքային պիտի ըլլան Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) եւ Եւրասիական Տնտեսական Միութեան (ԵԱՏՄ) շրջանակներուն մէջ Հայաստանի անդամակցութեան ու ստանձնած պարտաւորութիւններու հետ կապուած հարցերը:*

*Ըստ որոշ դիտարկումներու, Փաշինեան-Փութին յառաջիկայ հանդիպման կրնայ անդրադարձ կատարուիլ նաեւ ՀԱՊԿ-ին Ատրպէյճանի հնարաւոր անդամակցութեան հարցին: Նման հեռանկարի մասին վերջերս յայտարարած էր Ատրպէյճանի Միլլի Մեճլիսի իրաւական հարցերով յանձնաժողովի ղեկավար Ալի Հուսէյնլին: Վերջինս ըսած էր, թէ եկած է ժամանակը, որ Ատրպէյճանը քննարկէ ՀԱՊԿ-ին միանալու կամ գոնէ կազմակերպութեան մէջ դիտորդի կարգավիճակ ստանալու հարցը:*

*Փաշինեան-Փութին յառաջիկայ հանդիպման նախորդած են Փութին-Ալիեւ՝ Սոչիի մէջ մէկ շաբաթ առաջ տեղի ունեցած բանակցութիւնները, որոնց արդիւնքով ստորագրուած են տնտեսական համագործակցութեան խորացմանն ուղղուած շարք մը համաձայնագրեր: Անդրադարձ եղած էր նաեւ ԼՂ խնդրին: Նախագահներու երկկողմ հանդիպման յաջորդած համատեղ ասուլիսին Ալիեւը յիշեցուցած էր, որ վերջին տարիներուն Ատրպէյճանը Ռուսաստանէն շուրջ հինգ միլիառ տոլարի սպառազինութիւն գնած է, եւ համագործակցութիւնն այդ ոլորտէն ներս կը շարունակուի:*

# Իսրայէլի Դատախազութիւնը Մեղադրանք Պիտի Առաջադրէ Ատրպէյճանին Անօդաչու Սարքեր Մատակարարող Ընկերութեան Ղեկավարներուն

*Չորեքշաբթի, Օգոստոսի 29-ին, Իսրայէլի պետական դատախազութիւնը յայտարարած է, որ Ատրպէյճանի պահանջով՝ անօդաչու թռչող սարքերով Արցախի մէջ հայկական դիրքեր ռմբակոծած իսրայէլեան «Aeronautics Defense Systems» ընկերութեան ներկայացուցիչները հաւանաբար պաշտօնապէս պիտի ամբաստանուին՝ այդ մասին վկայութիւն տալու հրահանգին ենթարկուելէ ետք:*

*Յիշեցնենք, որ այս անօդաչու թռչող սարքերու արտադրութեամբ զբաղող նշեալ իսրայէլեան ընկերութեան պաշտօնեաները, անցեալ տարի, իրենց արտադրութիւններու փորձարկման ժամանակ, Ատրպէյճանի պահանջով յարձակած էին հայկական դիրքերու վրայ:*

*Իսրայէլի պետական դատախազութեան տնտեսական գործերով զբաղող վարչութիւն հրաւիրուած են ընկերութեան գլխաւոր տնօրէն Ամոս Մաթան, գլխաւոր տնօրէնի տեղակալ Մայիր Ռազմովիչ, զարգացման հարցերով տնօրէն Հայիմ Հիւաշար եւ շուկայական հարցերով տնօրէն Տէյվիտ Կոլտին:*

*Դատախազութեան վերոնշեալ յայտարարութիւնը կատարուած է մօտաւորապէս մէկ տարի տեւած հետաքննութեան հիման վրայ, որ կայացած էր համագործակցութեամբ Իսրայէլի ոստիկանութեան միջազգային յանցագործութիւններու հետաքննութեան ստորաբաժանումին, պաշտպանութեան նախարարութեան հետաքննական ստորաբաժանումին եւ դատախազութեան:*

*Ընկերութեան ներկայացուցիչները յայտարարած են, թէ իրենց տալիք վկայութեան ընթացքին պիտի ներկայացնեն իրենց դիրքորոշումը՝ պնդելով, որ իրենց նկատմամբ մեղադրանք առաջադրելու որեւէ հիմք չկայ:*

## ՀՀ Ոստիկանութիւնը Ձերբակալած է Միացեալ Նահանգներու Կողմէ Հետախուզուող Քեմալ Օքսուզը

*Ոստիկանութեան կազմակերպուած յանցաւորութեան դէմ պայքարի գլխաւոր վարչութեան ծառայողները 29 Օգոստոսին, համագործակցելով Հայաստանի մէջ Ինթըրփոլի ազգային կեդրոնական բիւրոյի ծառայողներու հետ, Երեւանի մէջ յայտնաբերած են Ամերիկայի Միացեալ Նահանգներու իրաւապահներու կողմէ հետախուզուող, ազգութեամբ Թուրք Քեւին (Քեմալ) Օքսուզը, որ ձեռնարկատիրական գործունէութիւն ծաւալելու նպատակով Հայաստանի մէջ հիմնադրած էր ընկերութիւն եւ սկսած գործունէութեան:*

*23 Օգոստոսին Քեմալ Օքսուզի նկատմամբ յայտարարուած էր միջազգային հետախուզում ԱՄՆ քրէական օրէնսգիրքի յատկանիշներով, մասնաւորապէս՝ ԱՄՆ ներկայացուցիչներու պալատի էթիկայի յանձնաժողովէն փաստացի նիւթերը կեղծելու միջոցով թաքցնելու եւ ներկայացուցիչներու պալատի էթիկայի յանձնաժողովին կեղծ յայտարարագիր ներկայացնելու մեղադրանքներով:*

*Միջազգային հետախուզում յայտարարելէ ետք՝ յաջորդ օրն իսկ, ան ոստիկանութեան տեսադաշտի մէջ էր, եւ ոստիկանութեան պետի անմիջական հսկողութեամբ ձեռնարկուած են ծաւալուն, անյետաձգելի հետախուզական միջոցառումներ:*

*Օքսուզը Թուրքամերիկացիներու եւ եւրասիացիներու հասարակական, շահոյթ չհետապնդող կազմակերպութեան նախագահն էր: Կազմակերպութեան նպատակն էր սերտ յարաբերութիւններ հաստատել Թուրքերու եւ ամերիկացիներու միջեւ՝ կազմակերպելով ուղեւորութիւններ դէպի Թուրքիա եւ Ատրպէյճան:*

*2013 թուականին Օքսուզը այլ անձերու հետ քանի մը ԱՄՆ քոնկրեսականներու հրաւիրած էր մասնաւոր ուղեւորութեան դէպի Ատրպէյճան եւ Թուրքիա:*

*ԱՄՆ քոնկրեսականներու մասնաւոր այցերը կը կանոնակարգուի էթիկայի յանձնաժողովի կողմէ՝ ԱՄՆ ճանապարհորդութիւններու մասին կանոնակարգի դրոյթներու համաձայն: Այս կանոնակարգի համաձայն՝ ուղեւորութեան հովանաւորները պէտք է լրացնեն յատուկ ձեւաթուղթեր, ինչ որ կը հաւաստէ ուղեւորութեան համար ծախսուող ֆինանսաւորման աղբիւրները, նաեւ պէտք է նշուի վճարումներու աղբիւրը եւ փաստացի ծախսերը:*

*Որպէս ճամբորդութեան ենթադրեալ կազմակերպիչ Օքսուզը էթիկայի յանձնաժողովին ներկայացուցած է ձեւաթուղթեր, որոնք կեղծած է, եւ նշած, որ կազմակերպութիւնը ուղղակի կամ անուղղակի որեւէ աղբիւրէ ֆինանսական միջոցներ չէ ստացած:*

*Պարզուած է, որ Օքսուզի ղեկավարած կազմակերպութիւնը փաստացի չէ վճարած բոլոր ծախսերու համար եւ ստացած է ֆինանսաւորումներ, որոնց մէջ՝ Ատրպէյճանի կառավարութեան պատկանող՝ «Սոքար» քարիւղաարդիւնաբերական ընկերութենէն:*

*Պարզուած է նաեւ, որ ԱՄՆ քոնկրեսի 9 անդամներ եւ աշխատակազմի 32 անդամներ ստացած են հարիւր հազարաւոր տոլարներ արժող նուէրներ:*

*Քեմալ Օքսուզը, որ ԱՄՆ քաղաքացի դառնալէ ետք անունը փոխած է Քեւինի, իր գործունէութենէն ներկայացուց նաեւ որոշ մանրամասնութիւններ:*

*Քեմալ Օքսուզը ձերբակալուած է:*

## ՅՔԾ Աղմկայարոյց Բացայայտումները

Շարունակուած էջ 1-էն

*մադրութեան ու ստիպուած եղած են ֆիզիքական ուժ եւ յատուկ միջոցներ կիրառել: ՅՔԾ սակայն կը պնդէ, որ ոստիկանութեան աւելի քան 1300 ծառայողներ, Մարտի 1-ի առաւօտեան 6:30-ին արդէն սկսած էին խաղաղ ցուցարարներու նկատմամբ գրոհը:*

*Միջադէպին ներկաներու խօսքով, իրաւապահները յարձակած են առանց նախազգուշացման, ցուցարարներուն մեծ մասը, այդ շարքին կանայք եւ երեխաներ, արթնցած են ոստիկանական մահակներու հարուածներէն:*

*2008 թուականի նախագահական ընտրութիւններէն ետք լայնամասշտապ բողոքի ցոյցերուն մասնակցած ու Մարտի 1-ի լուսաբացին ոստիկանական գրոհէն տուժած Գէորգ Գէորգեանն ու Դաւիթ Մաթեւոսեանն յայտնած են, որ այս բացայայտման երկար ժամանակէ կը սպասէին: Անոնց խօսքով, Յատուկ քննչական ծառայութիւնը յայտարարեց այն, ինչ բոլորին յայտնի էր՝ ցուցարարներէն ոեւէ մէկը զինուած չէ եղած:*

*«Եթէ իրենք նման գործողութիւն արել են, եւ դրանից յետոյ էդ ամէն ինչը մարսուել է, ոչ ոք դրա համար չի ենթարկուել ոչ մի պատժի, դա մենակ մի բացատրութիւն ունի, որ այդ ամէնը հրամայուած էր վերեւից», - ըսած է Դաւիթ Մաթեւոսեանը:*

*«Մենք մեր նախաձեռնութեամբ բոլոր ծառերի տակ, տարածքներում, որտեղ պատսպարուելու հնարաւորութիւն կար, ուսումնասիրում էինք, որ հանկարծ զէնք չլինի, չբերեն գցեն, յետոյ մեզ դրա համար մեղադրանք ներկայացնեն: Միշտ ուշադիր ենք եղել, բոլոր տարածքը միշտ կանոնաւոր ստուգել ենք: Ու էդ ընթացքում անընդհատ ոչ մի սիւիլ, քաղաքակիրթ մօտեցում ոստիկանութեան կողմից, ե՛ւ հայհոյանքներ, ե՛ւ բռնութիւններ, ե՛ւ ծեծ, ե՛ւ ձերբակալութիւններ», - ըսած է Դաւիթ Մաթեւոսեանը:*

*«Էդ իշխանութիւնները էնքան իրականութեան զգացողութիւնը կորցրած էին եղել, էնքան վստահ էին, որ իրենք մնալու են իշխանութեան, որ ամէն ինչ շատ փնթի են արել: Եւ բացայայտելու միակ շանսը էդ փնթիութիւնն է: Էսօր էդ փնթիութեան հետեւանքով է, որ էդ շինծու բաները բացայայտուում են, եւ էլի բաներ կը բացայայտուեն», - ըսած է Գէորգ Գէորգեանը:*

*2008-ին բողոքի ցոյցերը առաջնորդող Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած Հայ Ազգային Կոնկրէս կուսակցութեան փոխնախագահ Լեւոն Զուրաբեանի խօսքով՝ բարձրաստիճան ոստիկանները գործած են այն ժամանակուան իշխանութեան ցուցումով:*

## Վարչապետ Փաշինեան Հանդիպած է Մարտի 1-ի Զոհերու Հարազատներուն Հետ



*Մարտի 1-ի զոհերուն հարազատները վարչապետ Փաշինեանին հետ հանդիպումէն ետք եկած են այն համոզման, որ արիւնալի իրադարձութիւններէն 10 տարի անց ի վերջոյ պիտի բացայայտուին սպանութիւններն ու մեղաւորները պիտի կանգնին դատարանի առջեւ:*

*Մարտի 1-ի զոհ Յովհաննէս Յովհաննիսեանի այրին՝ Լիլիա Մինասեանը, եւս մասնակցած է վարչապետի հետ հանդիպման: - «Բացայայտուելու է Մարտի 1-ը մինչեւ վերջի՝ ամենացածր մարդուց սկսած: Ուղղակի ես հիմա իմաստը չեմ հասկանում Քոչարեանի ելոյթների, արդարանալու...», - «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է Լիլիա Մինասեանը:*

*Վարչապետ Փաշինեանը կառավարութեան մէջ հանդիպած էր Մարտի 1-ի զոհերու հարազատներուն եւ նշած՝ այս ընթացքին նման հանդիպում ունենալը միշտ ալ իր օրակարգին մէջ եղած է, պարզապէս կ՛ուզէր, որ հանդիպին այնպիսի պայմաններու մէջ, երբ շատ յստակ արդիւնքներ ունենան Մարտի 1-ի գործի բացայայտման առումով:*

*«Վերջին ամիսներին Մարտի 1-ի գործի բացայայտումը բաւականաչափ առաջ է ընթացել, եւ Օգոստոսի 17-ի հանրահաւաքում ես յայտարարեցի, որ, ըստ էութեան, բացայայտուած եմ համարում ընդհանուր առմամբ Մարտի 1-ի գործը. մնում է ապահովել պայմաններ, որ այդ բացայայտումը հասնի իր բոլոր մանրամասներին եւ վերաբերի բոլոր տեթալներին՝ այդ թւում նաեւ սպանութիւններ իրականացնողներին եւ հանգամանքներին:*

*Մարտի 1-ի գործի բացայայտումը մեր կառավարութեան համար, ինձ համար եւ Հայաստանի Հանրապետութեան իւրաքանչիւր քաղաքացու համար պատուի եւ քաղաքացիական արժանապատուութեան խնդիր է, եւ որեւէ կասկած չկայ, որ Մարտի 1-ի բոլոր ոճրագործները պէտք է կանգնեն պատասխանատուութեան առաջ՝ անկախ այդ ոճրագործների անուն-ազգանուններից, ներկայում կամ անցեալում զբաղեցրած պաշտօններից եւ ունեցած կարգավիճակից»,- ըսած է վարչապետ Փաշինեանը:*

## ՀԱԽ-ի Պատասխանը «Ուաշինկթըն Թայմզ»ի

Շարունակուած էջ 1-էն

*րացման փորձ մըն է, մեղադրելով վարչապետ Նիկոլ Փաշինեանը վրէժխնդրութեան մէջ:*

*ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Հայ Ամերիկեան Խորհուրդը բողոքի պատասխան նամակ մը յղած է թերթի խմբագրութեան՝ «Ժողովրդավարութեան խթանում կեղծ լուրերու ժամանակաշրջանին» վերնագիրով:*

*«Հակառակ վարչապետ Փաշինեանի վենտեթայի մասին Ուոլտի կարծիքին, նախկին նախագահ Ռոբերտ Քոչարեան օրինականօրէն ձերբակալուած է 2008 թ. Մարտի 1-ին խաղաղ ցուցարարներու նկատմամբ իր անօրինական գործողութիւններուն եւ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան շրջանցման համար:*

*«Վարչապետ Փաշինեանի պայքարը քրէաօլիկարխներու դէմ պէտք չէ քննադատուի: Այդ է ուղղութիւնը, որուն կը ձեռնարկէ որեւէ ժողովրդավարական պետութիւն, որ շահագրգռուած է յառաջընթացի եւ լաւ կառավարման խթանմամբ:*

*«Վարչապետ Փաշինեանի կառավարութիւնը պէտք է բարձր գնահատուի նախկին պաշտօնեաներու կողմէ յանցագործութիւններու հետաքննութեան համար, եւ այլ երկիրներու առաջնորդները պէտք է հետեւին անոր օրինակին, եթէ անոնք եւս կողմ են ժողովրդավարական հասարակութիւններու պահպանման, ուրտեղ յանցագործները պատասխանատուութեան կ՛ենթարկուին իրենց գործած արարքներուն համար՝ անկախ անոնց պետական եւ կամ պիզնէսի բարձր պաշտօններէն:*

*«Ի վերջոյ, վարչապետ Փաշինեան եւ անոր կառավարութիւնը, ի տարբերութիւն Քոչարեանի, առիթ տուած են, որ քննութիւնը եւ դատավարութիւնը շարունակուին անարգել: Հայաստանի Վերաքննիչ դատարանի կողմէ 2018 թ. Օգոստոսի 13-ին բեկանուած է Քոչարեանի ձերբակալման թոյլտուութեան որոշումը՝ Յուլիսի 27-ի առաջին դատարանին կողմէ: Այժմ երկու կողմերը դիմած են Հայաստանի Վճռաբեկ դատարան, Հայաստանի քրէական եւ վարչական արդարադատութեան բարձրագոյն մարմին, խնդրի լուծման համար: Այս երեւոյթը ոչ միայն անհնար էր, այլեւ չլսուած Քոչարեանի վարչակարգի ժամանակ:*

*«Ակնյայտ է, որ Ուոլտի միամիտ ենթադրութիւնները՝ Հայաստանի խաղաղ յեղափոխութեան առաջնորդ Փաշինեանի նկատմամբ, հիմնուած են փաստերու պակասի վրայ եւ փոխարէնը՝ առաջնորդուած են կեղծ քարոզչութեամբ:*

*«Ցաւալի է, որ «Ուաշինկթըն Թայմզ» որոշած է հրապարակել նման բորբոքիչ եւ մեղադրական յօդուած մը, որը հիմնուած է սխալ կարծիքի վրայ»,. յատկապէս ըսուած է ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդի բողոքի գրութեան մէջ:*

## Արայիկ Յարութիւնեան.- «Քաղաքական Ուժերու Ազդեցութիւնը Դպրոցներուն մէջ Բացառուած է»



Քաղաքական ուժերու ազդեցութիւնը դպրոցներուն մէջ պէտք է ըլլան զէրօ: Այս մասին, 29 օգոստոսին, Մոսկուայի տան մէջ, Երեւանի հանրակրթական դպրոցներու տնօրէններուն հետ օգոստոսեան խորհրդակցութեան ժամանակ նշած է Կրթութեան եւ գիտութեան նախարար Արայիկ Յարութիւնեանը, որ անդրադարձած է կրթութեան ոլորտին մէջ նախարարութեան աշխատանքներուն: Կարեւորագոյն շեշտադրումը, որմէ սկսած է խորհրդակցութիւնը, դպրոցներու ապաքաղաքականացումն է:

«Հանրակրթութեան նահանջի կարեւորագոյն պատճառներից մէկը եղել է դպրոցների քաղաքականացուածութիւնը: Ներկայում քաղաքական ուժերի ազդեցութիւնը զրօ պէտք է լինի դպրոցներում, զրօ: Այն դպրոցներում, որտեղ սա չի լինի, որտեղ տեղի իշխանութիւնները, նախկին եւ ներկայ օլիգարխները կը փորձեն որեւէ կերպ միջամտել դպրոցի գործերին, Կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը, կարծում եմ նաեւ Երեւանի քաղաքապետարանը կը միանայ, կը միջամտի եւ այդ ազդեցութիւնը նորից կ'իջեցնի մինչեւ 0»,- ըսած է նախարար Յարութիւնեանը:

Նախարարի խօսքով, բարեփոխումներու հիմնական ուղղութիւններէն է դպրոցներու խորհուրդներու ձեւաւորման կարգի փոփոխութիւնը: Անոր խօսքով, դպրոցներու խորհուրդները վերածուած էին վարչական շրջաններու, տեղի գործարարներու, երբեմն նաեւ տնօրէններու ազդեցութեան օղակներու եւ կը գործէին բացառապէս այդ օղակներու թելադրանքով:

«Հիմա էլ կան որոշ այդպիսի խորհուրդներ, բայց կարգը փոխելով այդ արատաւոր համակարգը ամբողջութեամբ արմատախիլ կ'արուի: Արմատախիլ»,- ընդգծած է նախարարը:

Արայիկ Յարութիւնեանը խնդրած է տնօրէններէն՝ օժանդակել գործընթացին:

«Ես ուզում եմ ասել, որ այն տնօրէնները, որոնք նոր ժամանակների այս բարեփոխումների օգով կը տարուեն եւ կրողը կը դառնան, կը լինեն իմ գործընկերը եւ ես կ'անեմ առաւելագոյնը իմ լիազօրութիւնների սահմաններում, առաւելագոյնը՝ նրանց օժանդակելու, օգնելու համար:

Բայց միւս դէպքերում, թէ քաղաքային իշխանութեան, թէ կրթութեան նախարարութեան արձագանգը կը լինի միանգամայն այլ»,- շեշտած է նախարարը:

Ան տեղեկացուցած է նաեւ, որ տնօրէններու ընտրութեան կարգի եւ ուսուցիչներու մրցոյթներու հարցին վերաբերեալ եւս մտադիր են փոփոխութիւն ընել:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք

«Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 massis2@earthlink.net

## Համաժողով Նուիրուած Հայ-Ամերիկեան Համատեղ Առեւտրական Գործակցութեան

5 Սեպտեմբերին Երեւանի մէջ ԱՄՆ դեսպանատունը եւ ԱՄՆ առեւտրական ծառայութեան Մոսկուայի գրասենեակը՝ ID-ի դրամատան հետ համատեղ, կազմակերպած էին մէկօրեայ համաժողով, որ նուիրուած էր արտօնեալ ընկերութիւններու (franchise) ընձեռած գործարար հնարաւորութիւններուն: Այս համաժողովը հայ-ամերիկեան առեւտրաներդրումային կապերու խթանմանն ուղղուած շարունակական նախաձեռնութիւններէն մէկն էր, որ մասնակիցներուն տուած է եզակի ու արժէքաւոր հնարաւորութիւն հնարաւորինս շուտ իմանալ այն յայտնի ամերիկեան մակնիշների մասին, որոնք հետաքրքրուած են հայկական շուկային մէջ իրենց ներկայութեան հաստատմամբ:

«Գիտեմ, որ այսօր սկիզբ կ'առնեն բազմաթիւ յաջող ձեռնարկներ: Յոյսով եմ, ԱՄՆ դեսպանատունը պիտի կարենայ պարարտ հող նախապատրաստել հայաստանեան գործարարներու եւ ամերիկեան ընկերութիւններու միջեւ կապերու ձեւաւորման համար, ապա մենք ետ կը քաշուինք, եւ դուք արդէն կ'ընէք այն ինչ ձեզ մօտ լաւ կը յաջողի եւ կը զարգացնենք ձեր պիզնեսը», - բացման խօսքին մէջ ըսած է ԱՄՆ դեսպան Ռիչարտ Միլսը:

Արտօնեալ ընկերութիւններու (ֆրենչայզինկի) համաժողովը մէկ յարկի տակ հաւաքած էր հայ եւ ամերիկացի գործարարները? օգնելով ձեւաւորել նոր գործընկերութիւններ հիւրընկալութեան, մանրածախ վաճառքի, զբօսաշրջութեան ոլորտներուն մէջ: Երեք ամերիկեան ընկերութիւններու՝ Papa John's Pizza-ի, Baskin Robbins-ի եւ Domino's Pizza-ի ներկայացուցիչներուն հետ միասին համաժողովին ներկայ էին աւելի քան 50 հայ գործարարներ եւ պետական պաշտօնեաներ: Ամերիկեան պիզնեսի ներկայացուցիչները յստակեցուցած են ֆրենչայզինկի իրենց հայեցակարգը եւ ծանօթացած հայաստանեան գործարար միջավայրի առանձնայատկութիւններուն:

Համաժողովի ժամանակ ամերիկեան ընկերութիւններու կողմէն ֆրենչայզինկային պայմաններու մասին ելոյթներէն զատ եղած են նաեւ ելոյթներ տեղական յայտնի ընկերութիւններու կողմէն? պիզնեսի, իրաւական ու ֆինանսական հարցերու, ինչպէս նաեւ ֆրենչայզինկի զարգացման ծիրէն ներս մտաւոր սեփականութեան իրաւունքի պաշտպանութեան կարեւորութեան մասին:

2015-ի նմանատիպ համաժողովին յաջորդած էր Tutti-Frutti Frozen Yogurts-ի երկու կէտերու բացումը՝ տեղի գործընկերներուն հետ ձեռք բերուած ֆրենչայզինկի պայմանաւորուածութեան համաձայն, եւ այս միջոցառումը միտուած էր նպաստել նմանօրինակ նոր զարգացումներուն:

## Նոր Թիմի Դէմ Խաղ Կայ

Շարունակուած էջ 2-էն

Կան իհարկէ օբիեկտիւ խնդիրներ, սակայն դրանց աղբիւրը կրկին կառավարութիւնն է, որը չի «կողմնորոշուել»՝ սա յեղափոխութի՞ւն է, թէ իշխանափոխութիւն: Իսկ սրանք տարբեր բաներ են, նախեւառաջ՝ պատճառահետեւանքային կապի տեսակէտից:

Երբ նախկին վարչակարգի ներկայացուցիչներն ասում են, որ ոչ մի յեղափոխութիւն էլ տեղի չի ունեցել, այլ ընդամէնը՝ իշխանափոխութիւն, դրանում կայ ճշմարտութիւն: Ընդհանրապէս, նախկին վարչակարգի ներկայիս ակտիւութիւնն ու Սահմանադրական լծակների գրագէտ կիրառումն արդէն իսկ այդ թէզի ապացոյցն են, որովհետեւ յեղափոխական հետեւողական գործողութիւնների արդիւնքում այդ վարչակարգն այսօր նոյնիսկ ծպտուն ի վիճակի չէր լինի հանել:

Նոր թիմի դէմ խաղ կայ, եւ այդ խաղն արդէն սկսուած է: Ընդհանրապէս բոլորի դէմ էլ խաղ կայ, եւ եթէ նախորդ վարչակարգն իր հակապետական ու ցինիկ բնոյթով կարող էր գալ այդ համոզման ու այն ներշնչել հանրութեանը, նոր իշխանութեան դէպքում, որը կոտրեց այդ համոզումը, թւում է թէ այդպիսի խնդիր չպէտք է լինէր: Բայց այս թէզը կրկնում է հենց նոր իշխանութեան ներկայացուցիչը:

Նոր թիմի դէմ խաղն արդէն սկսուած է, եւ դրա պատճառը նոր թիմն է, ուրիշ ոչ ոք: Եւ գնալով այդ խաղի համար հրամցւում են նորանոր փաստարկներ: Այդ խաղից խուսափելու երկու ձեւ կայ՝ մէկը ժամանակաւոր՝ նախկին վարչակարգի ճանապարհը, միւսը՝ համակարգային բարեփոխումները:

«ԼՐԱԳԻՐ»

LIFE INSURANCE INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE LONG TERM CARE MEDICARE DENTAL & VISION DISABILITY



MARONIAN INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

Bedros & Siamanto

805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815

MARONIANINSURANCE.COM

(818) 500 9585

(818) 269 0909

# Պատմական Աղաւաղումներ Հայոց Պատմութեան Դասագրքերում

Հայաստանի Տխրունի ուսանողական-երիտասարդական միութիւնը(ՍԴՀԿ) նամակով դիմել է Հայաստանի Կրթութեան եւ գիտութեան նախարարին Հայոց պատմութեան դասագրքերում թոյլ տրուած վրիպակներն ու աղաւաղումները շտկելու խնդրանքով, որոնք մասնաւորապէս վերաբերւում են ՍԴՀԿ անուանը:

Նամակն ամբողջութեամբ ներկայացնում ենք:

**(Շարունաուած նախորդ թիւէն)**

*էջ 110. «Հայ ժողովրդի ինքնապաշտպանութիւնն այդ ծանր օրերին իր վրայ էր վերցրել Դաշնակցութիւն կուսակցութիւնը»:*

***Կրկին անգամ պէտի նշենք, որ բարձր ենք գնահատում ՀՅԴ աւանդը ազգային-ազատագրական պայքարում, բայց պատմութիւնն անհրաժեշտ է ներկայացնել հանգամանքներով ու ամբողջապէս: Այս առթիւ չենք կատարի առանձին մէջբերում, քանզի վերը կատարուած մէջբերումները լրացնում են այդ բացը եւ տալիս սպառիչ պատասխաններ:***

*էջ 115. «Համիդեան բռնակալութեան տապալումը մեծ խանդավառութիւն առաջացրեց կայսրութեան բոլոր ժողովուրդների, այդ թւում նաեւ հայերի մէջ: Հայերի մեծ մասը հաւատաց երիտթուրքերի խոստումներին՝ կարծելով, թէ վերջ կը տրուի իրենց տառապանքներին»:*

«Եւ այսպէս, Դաշնակցութիւնը, մօտենալով երիտթուրքերին, հանդիսանալով նրանց բարեկամն ու գործակիցը, այնպիսի ազդու եւ կարեւոր դիրք էր բռնում Թուրքիայում...

...Կիլիկիան Հնչակեան կուսակցութեան գործողութիւնների վայրն էր: Հնչակեաններն ամենագրգռիչ դիրք էին բռնում: Նրանք հրատարակում էին «Ինքնավար Հայաստան» անունով թերթ, դաշնակցում էին ապակենտրոնացում ընդունող թուրք կուսակցութեան, ասել է՝ երիտթուրքերի կատաղի թշնամիների հետ, զինում էին կիլիկիացիներին, իսկ Ադանայի պոռոտախօս առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսը իր քարոզների մէջ խրատում էր, որ ամեն մէկը զէնք գնի, պատրաստուի: Թուրքերն էլ իրենց կողմից էին զինւում: Եւ մի օր, իհարկէ, պիտի գար, երբ այդ զէնքերն իրենք իրենց պիտի պայթէին: Այդպէս էլ եղաւ Աբդուլ-Համիդի սկսած պետական յեղաշրջման հետեւանքով եւ նրա հետ կապուած: Եւ երիտթուրքերը չպիտի լինէին գլուխ պատռողները, որ թուրքական հին ռեժիմը չջարդի հայկական հին ռեժիմը: Ընդհակառակը, նրանք իրենք էլ ընդունում էին նոյն այդ մեթոդը՝ նոր ռեժիմի միատարր օսմանցիութեան ռեժիմի յաղթանակի համար:

Այս տեսակ վերաբերմունքը դէպի Ատանայի ջարդը, այնուամենայնիւ, մազի չափ չվնասեց այն մօտիկ բարեկամական յարաբերութիւններին, որոնք գոյութիւն ունէին Դաշնակցութեան եւ երիտթուրքերի միջեւ...

... Օսմանեան պառլամենտում նստած հայ պատգամաւորները, մեծագոյն մասամբ դաշնակցական, գրեթէ լուռ մնացին Ատանայի դէպքերի հանդէպ, չանհանգստացրին երիտթուրքերի կառավարութեանը հարցապնդումներով, բողոքներով, պահանջներով: Եւ երբ «Բիւզանդիոն»[239] լրագրի խմբագիր [Բիւզանդ] Քեչեանն այդ առիթով գրեց, թէ հայ պատգամաւորները շատ լաւ գիտէին, որ եթէ խօսելն արծաթ է, լռելը ho ոսկի է, որ ամէն ամիս տրւում է նրանց պետական գանձարանից իբրեւ ռոճիկ, դաշնակցական խուժանը յարձակուեց նրա վրայ եւ ծեծեց:

Դժուարութիւններ ստեղծել երիտթուրքերի կառավարութեան դէմ Դաշնակցութիւնը չէր ուզում: Աւելի արտօնուած, աւելի տիրապետող դիրք գրաւելու համար՝ նա նոյնիսկ պաշտօնապէս, գրաւոր կերպով դաշինք կնքեց երիտթուրքերի կուսակցութեան հետ եւ առ ու ծախի առարկայ դարձրեց նոյնիսկ Ատանայի արիւնը: Ստանալով երիտթուրքերից խոստում, թէ առաջիկա պառլամենտական ընտրութիւններին դաշնակցականներին կը տրուի 20 տեղ, այդ հայ յեղափոխական կուսակցութիւնը ստորագրում է դաշնակցային պայմանագրի այն յօդուածն էլ, որ ասում էր, թէ Ատանայի արիւնահեղութիւնը պիտի մոռացութեան տրուի... Մնում էր, որ հին աւանդական սովորութեանը հետեւելով՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքը բողոք բարձրացնի Ատանայի վերաբերմամբ գործադրուած անարդարութիւնների դէմ: Ինչպէս սովորութիւն էր, Դուրեան պատրիարքն այդ բողոքի հետ ներկայացրեց եւ իր հրաժարականը: Այն ժամանակ նրա դէմ խիստ եւ երկարատեւ արշաւանք սկսեց Դաշնակցութիւնը՝ պահանջելով, որ նա ետ վերցնի իր հրաժարականը եւ, առհասարակ, չխառնուի այնպիսի գործերի մէջ, որոնք զուտ կրօնական հանգամանք չունեն: Մի պահանջ, որ երիտթուրքերն էլ էին առաջ քաշել:

Այսպէս սրտագին-մտերմական էին յարաբերութիւնները հայ եւ թուրք երկու կուսակցութիւնների մէջ: Երիտասարդ թուրքերը դեռ պատճառ չունէին իրենցից խրտնեցնելու դաշնակցականներին: 1909-ի պետական յեղաշրջումից յետոյ խախուտ մի կայունութիւն էր ստեղծուել նրանց համար: Հարկաւոր էր մրցութիւն հակառակորդ պահպանողական կուսակցութեան դէմ, եւ այդ մրցութեան մէջ դաշնակցականների աջակցութիւնը կարեւոր էր: Մերձակցութիւնը երկու դաշնակից կուսակցութիւնների շեֆերի մէջ ընդունում էր անձնականմտերմական կերպարանք: Այսպէս, Մալումեան-Ակնունիի եւ շատ ազդեցիկ երիտթուրք Թալեաթ-բէյի[240] յարաբերութիւնները սերտ ընկերական էին: Ապագան ցոյց տուեց, թէ ինչ սոսկալի կեղծիք կայ այդ բարեկամութեան մէջ»:

**-Լէօ, «Անցեալից»:**

«Այսօր մի մարդ չկայ, չէզոք թէ կուսակցական, հակայեղափոխական, թէ յեղափոխական, անտարբեր թէ իր արեան գենով գործի մէջ միջամխուող, որ իր դատապարտութեան քուէն չտայ Իթթիհադին: Բոլորն էլ տեղի ունեցած աղէտների մեծ պատասխանատուն նրան են համարում. ամէնքն էլ տեսնում, ասում, խօսում են, որ մեր արիւնախում թշնամին նա է: Բոլորն էլ խոստովանում են որ ջարդողը, փշրողը, հազարներով կոտորողը, տեղահան անողը, անապատներում մեր ժողովուրդը աւազահատիկների նման շաղ տուողը, սուլթան Աբդուլ Համիդի պակաս թողածը լրացնողը եւ հայաջնջութեան աւելի նորագոյն, թրքավարի մեթոդներ հնարողը, գործադրողը նա ինքը՝ Իթթիհադն է: Այդ մասին տարակարծութիւն գրեթէ չկայ: Իրաւ է, Շահ Աբբասն էլ տեղահանութիւն կատարեց, բայց համեմատաբար՝ աւելի մեղմ, պետական բարձր շահերի տեսակէտից մղուած, թէեւ [նրա արածները] դարձեալ չարութիւն, տնաքանդութիւն, աղէտ [էին]»:

**-Ստեփան Սապահգյուլյան, «Պատասխանատուները»:**



**Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան ազդարարութիւնը**

Սփիւռքահայութեան ազգապահպանումի մտահոգութեան ծիրէն ներս առաջնահերթ տեղ կը գրաւէ հայերէն դասաւանդող ուսուցչական շարքերուն նօսրացումը՝ հայկական բոլոր գաղութներէն ներս: Մինչ այդ՝ հայախօս աշակերտներուն թիւը հետզհետէ կը նուազի մեր դպրոցներէն ներս: Հայկական վարժարաններուն այս իրավիճակը ուսուցչական կազմերն ու պատկան մարմինները կը դնէ երկու գլխաւոր մարտահրաւէրներու դիմաց:

Առաջին՝ հայագիտական նիւթեր դասաւանդող արհեստավարժ երիտասարդ ուսուցիչներու պատրաստութիւն: Երկրորդ՝ հայագիտական նիւթերու ուսուցումը աւելի գրաւիչ, արդիական եւ արդիւնաբեր դարձնելու համապարփակ ծրագիրի մշակում:

Առաջինին պարագային, անհրաժեշտ է ներգրաւել որակաւոր թեկնածուներ եւ նիւթապէս ու բարոյապէս նեցուկ կանգնելով անոնց՝ հրապուրիչ դարձնել ուսուցչական ասպարէզը մեր վարժարաններէն ներս: Մինչ այդ սակայն, մեծապէս պէտք է գնահատել մեր ուսուցիչները, որոնք իրենց նուիրումի ոգիին եւ փորձառութեան շնորհիւ, կ՛ընեն իրենց լաւագոյնը՝ մեր մայրենի լեզուն, պատմութիւնն ու մշակոյթը սիրցնելու եւ փոխանցելու նորահաս սերունդին: Անհրաժեշտ է զանոնք դնել պատուանդանի որպէս խորհրդատուներ՝ յաչս ապագայի հայերէնի ուսուցիչներուն:

Պապայեան Մանկավարժական հիմնարկի յառաջադրութիւնն է կազմակերպել խորհրդաժողովներու շարք մը հետեւեալ նպատակներով.

Ա. Ուսուցիչներուն անհատական յաջող փորձառութիւններու փոխանակումի առիթներ ստեղծել, ուր փորձառու ուսուցիչներուն հարուստ փաստակին ու յաջողութիւններուն փոխանցումով պիտի ճոխացուի նորերուն թէքնիքներուն պաշարը եւ ուսուցիչներուն անհատական հարուստ փաստակը պիտի վերածուի հաւաքական ներուժի:

Բ. Անհրաժեշտ է, որ ուսուցիչներ հաւաքաբար տեղեկանան եւ ծանօթանան կրթութեան մարզէն ներս տեղի ունեցող նորութիւններուն, միասնաբար քննարկեն զանոնք եւ որդեգրեն այն ինչ որ յարմար կը նկատեն:

Գ. Կարեւոր է արհեստագիտական կապեր ստեղծել ուսուցիչներուն եւ համայնքէն ներս գործող որակաւոր հաստատութիւններու եւ կազմակերպութիւններու միջեւ:

Առաջին խորհրդաժողովը տեղի պիտի ունենայ 22 Սեպտեմբեր 2018-ին՝ ՀԲԸՄ-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոնէն ներս, Փասատինայի մէջ:



# Լոս Անճելոսի Իրանահայերու Միութեան Երգչախումբի Տարեկան Յառաշուք Համոյթը

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

Շաբաթ, Օգոստոս 25, 2018, երեկոյեան ժամը 7-ին, Կլենտէյլի Երիցական եկեղեցւոյ շատ գեղեցիկ սրահին մէջ, ներկայութեամբ երաժշտասէրներու հոծ բազմութեան, տեղի ունեցաւ Իրանահայերու Միութեան Լուտովիկա եւ Ցակոբ Այնթապլեան կրթական եւ մշակութային կեդրոնի երգչախումբի, 38րդ տարեդարձի հոյակապ երգահանդէսը:



Այդ օր պարզ երգահանդէսէ աւելի, հայ երգի իսկական փառատօն մըն էր, ուր հին, բայց՝ բնաւ չհինցած երգերու սքանչելի հրավառութիւն մըն էր տեղի ունեցածը: Իւրաքանչիւր երգ ոչ միայն կը խռովէր ներկայ հանդիսականներու հոգիները, այլ կ՛արժանանար անոնց ջերմ եւ երկարատեւ ծափերուն:

Ի բաց առեալ երկու երգերէ, յայտագրի Ա. եւ Բ. բաժինները, ամբողջութեամբ մշակումներն էին հայրենի երգի-պարի Անսամպլի՝ հայ երգի լուսաշող եւ անմար աստղերէն՝ Խաչատուր Աւետիսեանի:

Յիշենք, թէ վերջին տարիներուն, այս հոյակապ խումբի ղեկավարն է, նոյնինքն Խաչատուր Աւետիսեանի զաւակը՝ Միքայէլ Աւետիսեան:

*****

Միութեան Կեդրոնական Վարչութեան Նախագահ՝ ազգային-հասարակական երիտասարդ եւ բեղուն գործի՝ Յովիկ Գաբիկեանի բացման եւ բարի գալուստի ջերմ խօսքերով ընթացք տրուեցաւ յայտագրին:

Այդ գիշեր երգչախումբի կատարումներուն կը մասնակցէր «Գօրանի» ժողովրդային նուագախումբը, որ իր գեղեցիկ ներդրումը ունեցաւ հանդէսի ողջ տեւողութեան:

Հանդիսականները մեծագոյն հաճոյքով ըմբոշխնեցին 22 խմբային եւ անհատական, գուսանական եւ ժողովրդական համով-հոտով երգերու շարան մը, արժանանալով ժողովուրդի որոտընդոստ եւ խելայեղ ծափահարութեանց:

Առաջին մասին մէջ երգուեցան՝ «Տօն Վարդավառի», «Էրգրումի շորոր», «Եար քէլէ Նազով» (մենակատար Վեհանձն Գասպարեան), «Զաղացս պատիկ-պատիկ», «Էսօր Շաբաթ էղնիր» (մենակատար Վահան Լաքս), «Փնջլիկ-մընճլիկ», «Կարօտ» (մենակատար Սիլվա Թորոսեան), «Սէր իմ սիրուն ես», «Վասպուրականի երգեր» (մենակատար Հրայր Եղիայեան), «Հանինա նինա նինա»:

Իսկ երկրորդ մասին մէջ երգուեցան՝ «Զով գիշեր», «Կարփի ծերին մորի է» (մենակատար Սիլվա Թորոսեան), «Մոկաց հարսներ» (մենակատար Ռաֆֆի Դաւիթեան), «Քոչարի Թո» (պարսկերէն), մենակատար Ռաֆֆի Դաւիթեան,«Սաղի» (պարսկերէն - մենակատար Օննիկ Սիմոնեան), «Եար քո բարակ պոյին մեռնեմ», «Զեփիւռ բարեւ տար» (մենակատար Հերմինէ Ամիրեան), «Մարալ ջան հեզ արի» (մենակատար Հերմինէ Ամիրեան), «Նինօ»,«Տարօնի գորանի»:

Ժողովուրդը մեծագոյն խանդավառութեամբ եւ լիաթոք կը մասնակցէր երգչախումբի երգերուն:

Արդարեւ, գուսանական եւ ժողովրդական կոչուող երգերուն վրայէն որքան ժամանակը անցնի, այս գեղեցիկ երգերը, գինիի նման աւելի կը քաղցրանան եւ կ՛արժէքաւորուին:

Սփիւռքի մէջ հայ երգը միշտ ալ եղած է մեր ժողովուրդի ուրախ, տխուր, յուզումներ առաջացնող, հայրենասիրական ոգի ներարկող, ազգապահպանման, ազգակերտման կարեւոր ազդակներէն մին: Որքան հայ երգ լսենք եւ երգենք, այդքան մօտ կ՛ըլլանք մեր ազգային արմատներուն, ակունքներուն եւ հայրենիքին:

Եկէք միշտ վառ եւ կենդանի պահենք հայ երգը մեր տուներէն ներս եւ մեր նորահաս զաւակներուն սիրտերուն եւ հոգիներուն մէջ: Թող մեր երիտասարդներուն շրթներէն անպակաս ըլլայ հայ երգը:

Միութեան Կեդրոնական Վարչութեան Նախագահ՝ Յովիկ Գաբիկեանի փակման ջերմ եւ խանդավառ խօսքերով ու գնահատանքներով վերջ գտաւ, այս իրապէս հաճելի ձեռնարկը:

Ջերմօրէն կը շնորհաւորենք Իրանահայ Միութեան երգչախումբը, մաղթելով թէ երգիչ-երգչուհիներուն եւ թէ խումբի ղեկավարներուն՝ նորանոր յաջողութիւններ:


OFFICE SPACE FOR RENT IN PASADENA

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave

Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով

Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝

(626) 398-0506


# Հրայր Ճէպէճեանի «Սփիւռքահայ Կեանքեր Ինչպէս Որ Տեսայ» Գիրքին Ներկայացում



Շաբաթ 4 Օգոստոսին Աւստրալիոյ Թեմի Առաջնորդարանի կազմակերպութեամբ Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Էտկարեան սրահին մէջ, նախագահութեամբ Գերաշնորհ Տէր Հայկազուն Եպիսկոպոս Նաճարեանի տեղի ունեցաւ Արաբական Ծոցի Սուրբ Գրքի Ընկերութեան տնօրէն Դոկտ Հրայր Ճէպրճեանի «Սփիւռքահայ Կեանքեր Ինչպէս Տեսայ» գրքին շնորհահանդէսը: Հանդիսավարն էր Տիկին Սեդա Յովակիմեան, որ ներկայացուց Դոկտ Ճէպէճեանը ապա հրաւիրեց Առաջնորդարանի Դիւանապետ Նշան Պասմաճեանը ներկայացնելու համար նորատիպ գիրքը:

Խօսք առաւ հեղինակը, որ իր յատուկ լաւատեսութեամբ եւ պահանջկոտ կեցուածքով շեշտեց կարեւորութիւնը Հայերէն լեզուին եւ Քրիստոնեայ հաւատքին եւ անոնց պահպանման: Դոկտ Ճէպէճեան սփիւռքահայ այն մտաւորականներէն է որ ոչ միայն մատը մեր ազգի վէրքերուն վրայ կը դնէ այլ լաւատեսութեամբ կը վերաբերի անոնց բուժման եւ գործնական լուծումներ կ՛առաջարկէ ահազանգային կարեւորութիւն ունեցող մեր հարցերուն: Գիրքի խմբագիր Դոկտ Հրայրի տիկինը՝ Դոկտ Արտա Պոյնէրեան-Ճէպէճեան յայտնեց թէ դիւրին չէր եղած խմբագրելը այս հատորը, հաւաքել Դոկտ Հրայրի 2011-2017 ժամանակաշրջանին հրապարակած բոլոր յօդուածները եւ պահել շարունակականութիւնը Դոկտ Հրայրի փոխանցած պատգամին: Ապա հանդիսավարուհին հրաւիրեց Առաջնորդ Սրբազան Հայրը կատարելու փակման խօսքը: Սրբազան Հայրը վաղուց ճանչնալով հեղինակը իր գնահատանքը յայտնեց անկեղծ Հայ եւ անկեղծ Քրիստոնեայ Հրայրին տասնեակ տարիներու հայապահպանման ի նպաստ տարած աշխատանքին, կատարեց մէջբերումներ գիրքէն եւ պատգամեց Հրայրի լաւատեսութեամբ աշխատանք տանիլ կարենալ խորտակելու մեր առաջ կանգնած խոչընդոտները:

Հեղինակը իր հետ բերած էր 30 գիրքեր, որոնք վաճառուեցան եւ մակագրուեցան իր կողմէ: Տէր

Շար.ը էջ 17


THE WESTERN DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF NORTH AMERICA

"Zvartnots" Cultural Committee

Under the auspices of His Eminence Archbishop Hovnan Derderian, Primate

Invites you to

A CONCERT

of Armenian Sacred Hymns and Songs by Komitas, Sayat-Nova, and Khachaturian

In celebration of

100th Anniversary of Armenia's First Republic

and

2800th Anniversary of Yerevan Erebuni

On Sunday, September 23, 2018 at 6:00 pm

At St. Leon Armenian Cathedral

3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504



Featuring

Grammy Nominated & World Renowned Soprano

ISABEL BAYRAKDARIAN

With the UCSB String Quartet

Tickets: $20, $30, $50

For more information and reservation kindly call Diocesan office at (818) 558-7474

Lena Simonian at (818) 383-1322

### ԹՂԹԱԾՐԱՐԻ ՄԸ ՀԵՏՔԵՐՈՎ

# «ՄԵՐ ՏՈՒՆԸ ԾԱԽՈՒ ՉԷ՛»

## ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ ՀԱԶՄԻԷԻ ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ «ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ» ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ՅՈՎՍԷՓ ՄԵԼՔՈՆԵԱՆ
(Շարունաուած նախորդ թիւէն)

*-«Հազմիէի տեսուչ Հ. Յովսէփ (Ծ.) վրդ. Թոփալեանի միաբանական եւ կանոնական կապերը Մխիթարեան Միաբանութեան հետ դադրած են 9 Յունիս 2018 թուականէն սկսեալ:*

*-Հազմիէի կալուածը կը վայելէ արդէն Միջին Արեւելքի չափանիշով հայ գործակալութեան մը արհեստավարժ հոգատարութիւնը: Նպատակն է այնտեղ գործող դպրոցը փոխադրել Ռաուտա, յետ այստեղի կալուածին վերանորոգութեան, իսկ պահել Հազմիէն որպէս նորաշէն հասութաբեր (ընդգծումը ինծմէ) կալուած՝ ի նպաստ գլխաւորաբար Միաբանութեան Միջին Արեւելքի մէջ գործունէութեան»:*

Այս հաղորդագրութիւնէն ի յայտ կու գար թէ Հազմիէի Վիեննական Մխիթարեան վարժարանի հողատարածքի վաճառքին շուրջ ստեղծուած ներքին սուր տարակարծութիւնները յանգած էին Վարժարանի այժմու տնօրէն Հ. Յովսէփ Ծ. Վրդ. Թոփալեանի անձին դէմ կարգապահական որոշումի մը՝ Մխիթարեան Միաբանութենէն հեռացնելով 40 տարիներէ ի վեր դպրոցի Տնօրէնութիւնը իր ուսերուն շալկած օրինակելի հոգեւորական մը որ իր կեանքին սպառնացող վտանգներուն հակառակ ո՛չ միայն ապահոված էր վարժարանին ֆիզիքական գոյութիւնը Լիբանանի քաղաքացիական պատերազմի ամէնէն թէժ օրերուն, այլեւ ճարտար ֆինանսագիտութեամբ դպրոցի նիւթականը յաջողած էր ապահովել եւ տեւականացնել երբ ուրիշ հայ վարժարաններ կը տառապէին մեզի ծանօթ պիւտճէական դժուարութիւններէ:

Այս հաղորդագրութեան երկրորդ պարբերութիւնը կը փաստէր անգամ մը եւս թէ Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնը Հազմիէի Մխիթարեան Վարժարանի Ռաուտա «փոխադրութեան» պատրուակի ետին կը շարունակէր առեւտրական եւ կամ վաճառականական նպատակներ հետապնդել Հազմիէի հողատարածքի ապագայ գործածութեան եւ շահագործման տեսակէտէն: Նկատի առնելով անցեալի ձախող կալուածային գործառնութիւններէն բխած Վենետիկի Միաբանութեան ժառանգած ծանր պարտքերը, բնական է որ շահագրգիռ հասարակութիւնը կասկածով եւ տարակուսանքով համակուած դիտէ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան այս նոր կալուածային նախաձեռնութիւնը:

Դժբախտաբար Հազմիէի Վիենական Երկրորդական Վարժարանին շուրջ ստեղծուած այս տագնապալից զարգացումը կրկնութիւնն են այն դէպքերուն որոնք պատահեցան Լոս Անճէլըսի մէջ գործող Մխիթարեան վարժարանին պարագային ասկէ տասնեակ մը տարիներ առաջ: Արդարեւ, Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան նոյն ղեկավարութեան գործելակերպը պատճառ եղաւ որ Վիեննական Մխիթարեան Միաբանութեան պատկանող Լոս Անճէլըսի վարժարանը փակուի սփիւռքի ամէնէն հայաշատ կեդրոնին մէջ ու տարիներու վաստակ ունեցող Մխիթարեան միաբան մը յանձինն լուսահոգի Հ. Օգոստինոս վրդ. Սեքուլեանի իր խոր ծերութեան մէջ անարգուի, կղզիացումի ենթարկուի ... որովհետեւ կը փորձէր վարժարանը ազատել շահադիտական նպատակներ հետապնդող «եղբայրակիցներէ»: Եթէ այդ օրերուն չի գտնուէին բարեհոգի անձ մը կամ անձեր Լոս Անճէլըսի գաղութին մէջ որոնք Հ.Օգոստինոս վրդ. Սեքուլեանի նիւթական օգնութեան հասան, վստահաբար իննիսունամեայ եւ վաստակաւոր կրթական գործիչ մը փողոց պիտի մնար յետին թշուառութեան մէջ ....:

Ինչպէս կը տեսնուի այս գրութենէն Մխիթարեան Միաբանութեան միացումը 2000 թուականին գործնական գետնի վրայ ստեղծած է կարգ մը դժուարութիւններ եւ ծնունդ տուած է ներքին տարակարծութեանց երբ հարց ծագած է Վիեննական Մխիթարեան Միաբանութեան պատկանող վարժարաններու հողատարածքներուն, շէնքերուն եւ անշարժ կայքերուն տնօրինումին կամ վաճառքին: Լոս Անճէլըսի Վիեննական Մխիթարեան Վարժարանի անփառունակ վախճանը տակաւին կոտտացող վէրք մըն է Ամերիկահայ գաղութին համար:Նոյնպիսի վախճան մը կը սպառնայ նաեւ Հազմիէի Վիեննական Մխիթարեան վարժարանին դատելով այն հապճեպ ու խակ գործառնութիւններու բնոյթէն որոնց ականատես կ'ըլլայ հայ հանրութիւնը վերջին տարիներուն:

Անոնք որ այս վաճառքի գաղափարը յղացան ու փորձեցին անոր գործնականացումը իրականացնել անգիտակցաբար, եւ կամ բոլորովին անտեղեակ Լիբանանեան կեանքի իրականութիւններէն, հիմնական սխալ մը գործեցին երբ կալուածային վաճառքի պիտակին տակ համայնքային կեանքի ականապատուած դաշտը մտան: Միաժամանակ այդ մարդիկը չի հասկցան թէ Հազմիէի Վիեննական Մխիթարեան վարժարանը իբրեւ կրթական հաստատութիւն որքա՜ն ընդելուզուած էր շրջանի հասարակական, ընկերային եւ կրթական կեանքին մէջ ու իր մասնայատուկ տեղը ունէր այդ այդ շրջանի մթնոլորտին մէջ՝ մանաւանդ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին եւ անոր աւարտէն ի վեր: Արդարեւ, Լիբանանեան քաղաքացիական պատերազմի օրերուն վարժարանը իր դռները լայն բացած էր տեղացի բնակչութեան առջեւ իբրեւ ապաստան, անոնց բարօրութիւնը ապահովող պայմաններ ստեղծելով վարժարանէն ներս այնպիսի ատեն մը երբ մահացու եւ աւերիչ ռումբեր կը տեղային ամէն կողմէ, ամէն օր: Տեղացի բնակչութիւնը չէր կրնար մոռնալ եւ չէ մոռցած այդ փրկարար արարքը եւ մէ՛կ մարդու նման ոտքի կանգնեցաւ դպրոցին սպառնացող վտանգին դէմ դնելու: Հետեւաբար, զարմանալի չէ որ անոնց երախտագիտական զգացումներու արտայայտութիւնը երեւան եկաւ Լիբանանեան մամուլին մէջ կացութիւնը եւ վտանգը նկարագրող տեղեկատուութիւններով: Իսկ իր կարգին Հազմիէի քաղաքապետարանը իր տրամադրութեան տակ եղող իրաւական բոլոր միջոցները ի գործ դրաւ կանխելու եւ արգելք հանդիսանալու համար այս վաճառքի գործառնութեան եւ կալուածի փոխանցումին:

Ամէնէն ցաւալին այն է որ Թուրքիոյ Հայ Կաթողիկէ համայնքի վիճակաւոր Գերպ. Լեւոն Արք. Զէքիանի իբրեւ Պապական Նուիրակ նշանակումէն ետք Վիեննական Մխիթարեան Վարժարանի հողատարածքի շուրջ ստեղծուած տագնապը դադար չառաւ, թէեւ տարբեր երանգ մը ստացաւ «դիւանագիտական» լեզուի մը գործածութեամբ եւ նոր դարձուածքներով: Արդարեւ, հայ մամուլին մէջ 2 Ապրիլ 2018 թուականին լոյս տեսած Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Դիւանի հրատարակած հաղորդագրութիւնը հետեւալը կը նշէր իր 9-րդ պարբերութեան մէջ : «Լեւոն Արք.ի նշանակումէն քիչ ժամանակ առաջ բաւական չփոթ ստեղծեր էր Լիբանանի Հազմիէի թաղամասին մէջ գտնուող Մխիթարեան կալուածի վաճառման ծրագիրը, ուր կը գործէ նաեւ համեստ (ընդգծումը ինծմէ) դպրոց մը»: Իսկ 20-րդ պարբերութեան մէջ հաղորդագրութիւնը կ'աւելցնէր:« Հազմիէի կալուածը կը վայելէ արդէն (ընդգծումը ինծմէ) Միջին Արեւելքի չափանիշով ծանօթ հայ գործակալութեան մը արհեստավարժ հոգատարութիւնը: Նպատակն է այնտեղ գործող դպրոցը փոխադրել Ռաուտա՝ յետ այստեղի կալուածի վերանորոգման, իսկ պահել Հազմիէն որպէս նորաշէն հասութաբեր կալուած՝ ի նպաստ գլխաւորաբար միաբանութեան Միջին Արեւելքի մէջ գործունէութեան»:

Այս երկու պարբերութիւնները կը փաստեն տակաւին յամեցող մտածելակերպի մը գոյութիւնը որուն միտք բանին այդ հողատարածքի «առեւտրական» շահագործումին շուրջ կը դառնար:

Ի պատասխան 2 Ապրիլ 2018 թուականին լոյս տեսած Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Դիւանի հրատարակած հաղորդագրութեան երկու կարեւոր նշումներ պէտք է ընել հոս:

Բացայայտ է որ այս հաղորդագրութեան հեղինակը ծանօթ չէ Հազմիէի Մխիթարեան Երկրորդական Վարժարանի կրթական անցեալին եւ ներկային եւ միաժամանակ գաղափար չունի թէ ինչի՜ մասին կը խօսի: Հազմիէի Վիեննական Մխիթարեան Երկրորդական Վարժարանը համեստ դպրոց մը չէ՛ եղած երբեք անցեալին, ո՛չ ալ համեստ դպրոց մըն է ներկայիս իր 250 աշակերտներով այն առումով զոր կը փորձէ ներկայացնել վերոյիշեալ հաղորդագրութիւնը:Կը փափաքիմ յիշեցնելու այդ հաղորդագրութիւնը պատրաստող անձին թէ հայ կրթական համալիրէն ներս համեստ դպրոց չի՛ կայ:Կա՛յ հայ լեզուի, մշակոյթի , գրականութեան եւ մեր ժողովուրդի պատմութեան նուիրուած կրթական հաստատութիւն մը, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել ամրոց մը,որ սփիւռքի պայմաններուն մէջ մեր դիմացկունութեան եւ գոյապահպանման խարիսխը կը հանդիսանայ: Այս պայքարին իրենց մասնակցութիւնը բերած են Մխիթարեան զոյգ Միաբանութիւնները, թէ՛ Վիեննա եւ թէ՛ Վենետիկ, ու փաստած են խօսքով եւ գործով թէ իրենց «համեստ» դպրոցները եւ վարժարանները ինչպիսի դեր մը խաղացած են հայ մանուկի,պատանիի եւ երիտասարդի կրթութեան ասպարէզին մէջ: Պարզապէս այդ հաղորդագրութեան մէջ գործածուած «համեստ» բացատրութիւնը ձախող եւ տգեղ փորձ մըն է նսեմացնելու անցեալի եւ ներկայի կրթական այն աշխատանքը որ յառաջ տարուած է Հազմիէի Վիեննական Մխիթարեան յարկին տակ՝ արդարացնելու համար դպրոցի «փոխադրութեան» քմահաճ կամ խակ կարգադրութիւնը:

Հազմիէի Մխիթարեան վարժարանանի հասցէին այդ «համեստ» ածականի գործածութիւնը այդ հաղորդագրութեան մէջ անարգանք մըն է ուղղուած բոլոր այն երախտաւոր Մխիթարեան հայրերուն, ուսուցիչներուն, նախկին եւ այժմու սաներուն եւ անոնց ծնողներուն, որոնք հազար ու մէկ զոհողութիւն յանձն առնելով պահած ու պահպանած են Հազմիէի Վիեննական Մխիթարեան վարժարանը:Այդ «համեստ» բառի գործածութիւնը անարգանք մըն է նաեւ ուղղուած երջանկայիշատակ Ծիրանաւոր (Կարդինալ) Գրիգոր-Պետրոս ԺԵ Կաթողիկոս-Պատրիարք Աղաճանեանին,որ Հոկտեմբեր 1956 թուականին Հազմիէի Մխիթարեան Երկրորդական վարժարանին նորակառոյց կառոյցի բացումին, դպրոցի քառասիւն շէնքին առջեւ պերճիմաստ խօսքով կը բնութագրէր այդ վարժարանի ոգեկան արժէքներու հիմքը երբ կը բացագանչէր խօսքը ուղղելով ներկաներուն: «Ազգ, Կրօն, Հայրենիք եւ Գիտութիւն այն չորս սիւներն են որ կը բարձրացնեն այս շէնքը: Պահեցէ՛ք եւ պաշտպանեցէ՛ք զայն»:Այդ խօսքերը պատգամ էին ուղղուած բոլոր անոնց որոնք ներկայ էին հոն այդ օրը, ծնողներ, բարեկամներ, պաշտօնական հիւրեր, աշակերտներ ներառեալ այս տողերը գրողը որուն ականջներուն մէջ տակաւին կը հնչեն մարգարէաշունչ այդ խօսքերը:

Երկրորդ նկատողութիւն մը եւս: Ներկայ Պապական Պատուիրակի հովանիին եւ հսկողութեան տակ գործող Վենետիկի Մխիթարեան վարչակազմը կանգնած է բարոյական հսկայ պատասխանատուութեան մը առջեւ: Երբ Համաշխարհային Երկրորդ Պատերազմէն անմիջապէս ետք այդ օրերու Վիեննական Մխիթարեան Ընդհանրական Աբբահայր Հ. Մեսրոպ Արք. Հապոզեան Ամերիկա կու գար դրամահաւաքի՝ Պէյրութի մէջ Վիեննական Մխիթարեան նոր վարժարան մը կառուցելու համար,Ամերիկահայ բարերարներ իրենց նուիրատուութիւններով սատար կանգնեցան այդ կրթական ծրագրին:Ո՛չ մէկ ատեն անոնք կրնային երեւակայել թէ իրենց նուէրներով կառուցուած դպրոցն ու անոր կայքն ու կալուածը օր մը «հասութաբեր» նպատակներու գործածութեամբ պիտի չեղէին իրենց նպատակադրած առաքելութենէն:Այդ նուիրատուները գիտակցաբար մօտեցան Մխիթարեան հայրերու առաջարկին Լիբանանի մէջ վարժարան մը բանալու եւ ծաղկեցնելու գաղափարին եւ իրենց «համեստ» լումաները ներմուծեցին այդ գաղափարի յաջողութեան համար: Հետեւաբար, դպրոցի ներկայ կալուածը հասութաբեր աղբիւրի վերածելու գաղափարը դաւաճա-

Շար.ը էջ 17

# Պատմական Գրքի Հրատարակման Առիթով (Ստեփան Երէցի «Հանգիտագիրքը»)

Ռ. ԿՈՐԻՒՆ

*Բարեկամի միջոցով, Հայաստանից, մեծարժէք նուէր եմ ստացել՝ վերոնշեալ գիրքը, այն կարդալով պարտականութիւն զգացի անպայման անդրադառնալ դրուատանքի խօսքերով չոյժ կարեւոր այս չնորհակալ գործի համար, նախ՝ հեղինակին, որի երկը երկար ժամանակ մնացել էր անլուր ու անյայտ, մինչեւ այն որ 1888 թ. Ամենափրկչեան վանքի ձեռագրատանը յայտնաբերում է՝ «Նոր Ջուղայի պատմութիւն» գրքի հեղինակ՝ Յարութիւն Տէր Յովհանեանցը(ըստ պրֆ. Վահան Ա. Բայբուրդեանի), ապա՝ հրատարակչին, օրհնութեան եւ գնահատանքի ուղերձաբերներին, գրաբարից աշխարհաբարի փոխադրողներին՝ Մատենադարանի աւագ գիտաշխատող՝ Թամարա Հ. Մինասեան եւ Մատենադարանի գիտաշխատող՝ Լուսինէ Ս. Թումանեան, վերլուծական գրութեամբ պրֆ. Վահան Ա. Բայբուրդեանին, «Ծանօթագրութիւն»-ը՝ պրֆ. Վահան Ա. Բայբուրդեանին եւ բանասիրական գիտութիւնների թեկնածու՝ Յասմիկ Յ. Կիրակոսեանին, խմբագրական կազմին՝ գլխաւոր խմբագիր՝ պրֆ.Վահան Ա. Բայբուրդեան, խմբագիր՝ Յասմիկ Յ. Կիրակոսեան, սրբագրիչ՝ Արմենուհի Դեմիրճեան, էջադրում եւ ձեւաւորում՝ Անահիտ Խանզադեան: Գրքում ներառուած է խմբագիրների եւ թարգմանիչների պատկերը եւ ամփոփ կենսագրութիւնը:*

*Ստուարակազմ գիրք, հեղինակի ձեռագիծ պատկերը վրան նախշուած, բաղկացած 329 էջերից եւ յաւելեալ նմուշներ ձեռագիր մատեանից ու հեղինակի տապանաքարի պատկերը: Գիրքը հրատարակել է Թեհրանի «Փերիոյ Կրթասիրաց» միութիւնը ցանկում նշուած հետեւեալ անձերի՝ Հ. Թահմազեան, Մ, Զարգարեան, Գ. Արմենեանց, Հ, Նաւասարդեան, Եարիջանեան եղբայրներ, Ժ. Ղուկասեան, Ա. Նազարեան, Թ. Իսաղուլեան, Արի. Յարութիւնեան, Արչ. Յարութիւնեան, Ա. Շահբազեան, Ա. Մկրտչեան եւ Մ. Ասլանեան դրամական յատկացումներով: Գիրքը տպագրուել է Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի գիտական խորհրդի երաշխաւորութեամբ Թեհրանի «Ալիք» հաստատութեան տպարանում յուլիս 2017 թ. չատ ընտիր տպագրութեամբ:*

*Հրատարակիչ՝ «Փերիոյ Կրթասիրաց» միութիւնը երկու խօսք գրութեամբ ներկայացնում է գրքին առնչուող տպագրութեան պատմութիւնը, ապա՝ չնորհակալական խօսքեր ուղղուած վերոնշեալ անձերին:*

*Գրքի կապակցութեամբ յիշենք ԹՀԹ առաջնորդ Սեպուհ Արք. Սարգսեանի՝ «Խօսք գնահատանքի եւ օրհնութեան» գրութիւնից դիպուկ պարբերութիւնը՝«Մինչ այսօր Ստեփանոս Երէցի մասին գրուած վկայութիւնները ցոյց են տալիս իր անուրալի դերը 18-րդ դարի Փերիայի մեր ժողովրդի կեանքի հետ առնչուած աւանդութիւնների, սովորութիւնների, տօնակատարութիւնների, պատմական դէպքերի պահպանման եւ գրաւոր կերպով այն սերունդներին փոխանցելու անգնահատելի աշխատանքի մէջ»:*




*Եւս յիշատակենք ժամանակի ՀՀ Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանի ուղերձից սոյն հատուածը՝ «Գիրքն արժէքաւոր է նրանով, որ հեղինակը որպէս ժամանակաշրջանի իրադարձութիւնների ականատես անաչառ կերպով ներկայացրել է իրանահայութեան ոչ մէկ դարից աւելի կրած զրկանքները, տառապանքներն ու հարստահարութիւնները, այլեւ անդրադարձ է կատարել Իրանի պատմութեանը ներկայացնելով երկրի քաղաքական եւ տնտեսական կեանքը»:*

*«Թարգմանիչների խօսք» գրութեան մէջ ներկայացւում է բնագրի հակիրճ պատմութիւնը, պարունակութիւնը, լեզուն, գրական արժանիքը, քանի օրինակի գոյութիւնը եւ ուր գտնուելը: Յիշենք մէկ պարբերութիւն նրանից՝«Հայ պատմագրութիւնը հարստացաւ եւս մէկ սկզբնաղբիւրով՝ Ստեփան Երէց Հազարջրիբեցու՝ «Հանգիտագիրք»-ի բնագրի եւ աշխարհաբար փոխադրութեան ամբողջական հրատարակութեամբ: Առաջին անգամ շրջանառութեան մէջ է մտնում մի երկ, որը չատ կարեւոր սկզբնաղբիւր է իրանահայ գաղթօջախի, յատկապէս Փերիայի, Բուրվարու, Նոր Ջուղայի 1666-1789 թ.թ. պատմութեան եւ ընդհանրապէս Իրանի այդ շրջանի պատմութեան ուսումնասիրման համար»:*

*Բովանդակութիւնը*

*Գիրքը պարունակում է հեղինակի գրաբար բնագիրը 41 պրակներից, «Օրհնութեան գիրը», «Պատմութիւնը գրելու պատճառը եւ յիշատակարանը», նրանց աշխարհաբար թարգմանութիւնը, բնագիր «Տաղերը», հեղինակի՝ «Լուծմունք բառից» (դժուար բառերի ցանկ): Խմբագրերի՝ ծանօթագրութիւններ, անուանացանկեր (անձնանունների եւ տեղանունների):*

*Պատմագիրքը պարունակում է Իրանի աւելի քան հարիւր քսան տարիների պատմութիւնը՝ 1666-1789 թ.թ. որի մասին պրֆ. Բայբուրդեանը վերլուծական դիտարկումով ներկայացնում է՝ իրադարձութիւնների, դէպքերի եւ եղելութիւնների անցուդարձը յաւելեալ տեղեկութիւններով եւ մեկնաբանութիւններով ակնարկելով այլ աղբիւրների Իրանի եւ բռնագաղթեցուած հայութեան մասին ինչպէս օրինակ՝Պատմութիւն Առաքել Վրդ. Դաւրիժեցւոյ, Գրիգոր Վրդ. Դարանղեցւոյ «Ժամանակագրութիւնում», Զաքարիա Սարկաւագի՝ «Պատմագրութիւնում», Զաքարիա Ագուլեցու՝ «Օրագրութիւնում», Աւգուստինոս Բաջեցու՝ «Ճամբորդութիւնում» եւ այլն: Պրֆ. Բայբուրդեանը գնահատում է հայկական աղբիւրները Իրանի պատմութեան հարցերի գիտական լուսաբանման տեսակէտից, այդպիսի աղբիւրներից նա յիշատակում է Խաչատուր Ջուղայեցու՝ «Պատմութիւն պարսից» գիրքը, որի մասին գրում է՝ «Հեղինակը տալիս է պարսից թագաւորների ժամանակագրութիւնը Կիւրոսից սկսեալ եւ հասնում է մինչեւ իր ժամանակը՝ Քեարիմ Խան Զանդի մահը (1779) թ.: □Նա իբրեւ իրադարձութիւնների ժամանակակից անձ ճշկրիտ տեղեկութիւններ է փոխանցում Իրանի տասնութերորդ դարի այդ խառնակ շրջանի պատմութեան մասին»: Պրոֆեսորը յիշում է նաեւ ուրիշ հայկական չատ հաւաստի աղբիւրներ: Գալով Ստեփան Երէցի մասին նա գրում է՝«Նրա կեանքի մասին մեզ հասած տեղեկութիւնները վերին աստիճանի սուղ եւ թերի են□«Պատմագիրք»-ը յիշատակում է. որ Ստեփան երէցը քահանայական տոհմից է, նախահայրը՝ Տէր Մատթէոսը Արարատեան գաւառից Շահ Աբբաս Ա.-ի կողմից բռնագաղթեցուած□Նրա հայրը Տէր Աղեքսանդր□, նա ծննդավայր Հազարջրիբում հօր մօտ գրաճանաչ եւ նախնական գիտելիքներ է ստանում, ապա գնում է Նոր Ջուղայի վանք ուսման համար: Վանքը հանդիսանում էր տարագիր հայութեան կրթականմշակութային կեանքի լուսաւոր կենտրոնը□, նա ամուսնանում եւ ունենում է երեք որդի□, քահանայ է ձեռնադրւում□, նա եղել է ժամանակի ուսեալ, կարդացած եւ բանիմաց անձնաւորութիւններից մէկը: Նա լինելով ստեղծագործ խառնուածքի տէր հոգեւորական զբաղուել է գրական գործունէութեամբ՝ թողնելով բաւականին ծաւալուն ժառանգութիւն□: Նրա առաւել գնահատելի եւ արժէքաւոր գործը, անկասկած, նրա՝ «Հանգիտագիրք» անունով պատմական երկն է□, հեղինակն այն անուանում է՝ «Մտածումներ անցեալ եւ ներկայ ժամանակների մասին»: Պատմական այդ երկը զետեղուած է 488 էջանոց հաստափոր ու կաշեկազմ մի մատեանում□, որի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են Իրանում Սեֆեան-Սեֆեֆեան հարստութեան Շահ Աբբաս Բ.-ի (1642-1666) թ.թ. կառավարման վերջից եւ աւարտւում է 1789 թ., այսինքն Մուհամմադ խանի եւ Լոթֆալի խանի ժամանակներում□» եւ այլ տեղեկութիւններ: Ըստ պրֆ. Բայբուրդեանի՝ «□պատմագիրն իր նկարագրած դէպքերի մեծ մասի ոչ միայն ժամանակակիցն է եղել, այլեւ՝ ականատեսը: Նա անկեղծ արձանագրող է եւ ամենայն բարեխղճութեամբ իր տեսածն ու լսածը մանրամասնօրէն գրի է առել□: Նրա երկի մեծագոյն արժէքը փաստերի հաւաստիութեան մէջ է□Նա միշտ խուսափել է ոչ արժանահաւատ կամ հակասական տեղեկութիւններից ու վկայութիւններից: Հետեւաբար, Ստեփանոս Երէցը մեզ ներկայանում է որպէս բարեխիղճ, խոհուն եւ ստուգապատում պատմագիր: Իրանի պատմութեան մասին «Պատմագրքում» բերուած տեղեկութիւնները վերաբերում են ինչպէս քաղաքական, այնպէս էլ տնտեսական եւ ընկերային կեանքին: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ այդ երկը Իրանի պատմութեան ուշ միջնադարի եւ Նոր ժամանակների սկզբի կարեւորագոյն եւ եզակի բնոյթ ունեցող աղբիւրներից մէկն է: ԺԷ դարի երկրորդ կէսի եւ ԺԸ Դարի պատմութեանը նուիրուած լինելով՝ այն ընդգրկում է տուեալների աւելի լայն շրջանակ-կարեւորագոյն տեղեկութիւնների աղբիւր նաեւ Աֆղանստանի, հարաւային Կովկասի երկրների, յատկապէս Վրաստանի պատմութեան տարբեր հարցերի վերաբերեալ»:*

*Հատուածների նշումով շարունակենք հիմնուել պրֆ. Բայբուրդեանի ստուգաբանող գրութեան, նա գրում է՝ «Ստեփանոս Երէցը որպէս խորագիտակ հետազօտող հիանալի ըմբռնել է ժամանակի ոգին□: «Պատմագրքում» մեծ տեղ է յատկացուած հայ գաղթաշխարհի մի ուշագրաւ հատուած ներկայացնող իրանահայ գաղութի եւ յատկապէս հեռաւոր օտարութեան մէջ գտնուող Փերիա եւ Բուրվարի գաւառների կեանքի պատկերմանը□Նա լաւ գիտէ նրանց առօրեան ու հոգսերը եւ դրանց մասին ամենայն բարեխճութեամբ հաղորդում է ընթերցողին: Նրա «Պատմագրքում» կարմիր թելի պէս անցնում է այն իրողութիւնը, որ այդ հայրենասէր մարդու մօտ մշտապէս տրոփել է ազգային ոգու զարկերակը»:*

*Պրֆ. Բայբուրդեանը իր գրութեան մէջ յիշատակել է մի չարք գրողներ, որոնք անդրադարձել են Ստեփանոս Երէցի ժառանգութեանը, ինչպէս օրինակ՝ Յարութիւն Տէր Հովհանեանցը, որը նրա պատմութեան գրքից լայնօրէն ընդգրկում է իր՝«Ջուղայի պատմութեան» գրքում: Այսպէս՝ Իրազեկ(Յակոբ տէր Յակոբեան) 1938 թ.«Մի անյայտ բանաստեղծ ու պատմագիր՝Ստեփաննոս Երէց փերիացի» վերնագիր յօդուած է տպագրել Թեհրանում լոյս տեսնող «Նաւասարդ» ամսագրում: Արամ Երեմեանը «Էջմիածին» ամսագրում տպագրում է մի յօդուած՝ «Ստեփան Երէցի մեծարժէք ձեռագիր մատեանը» վերտառութեամբ: Վաստակաշատ բանասէր՝ Լեւոն Մինասեանը առաւել ուշադրութեամբ պատմագրքի երկու հարիւրամեակի առիթով «Ալիք»-ում 1949 թ. տպագրում է մի յօդուած «Պատմագիր Ստեփան Երէց» անունով, նաեւ իրանահայ գաղութի 350 ամեակի առիթով հրատարակում է 47 էջանոց մի գրքոյկ 1956 թ. «Պատմագիր Ստեփան Երէց» անունով:*

*Կարեւոր սկզբնաղբիւր*

*Պատմագիրը խաների եւ թագաւորների անմարդկային արարքների մասին հայ գիւղացու նկատմամբ արտասուաթոր աչքերով եւ ցաւ ու վշտով է գրի առնում, նա յայտնում է՝ « Երբ շահ սուլթան Հուսէյնի (1694-1722) թ.թ. Սեֆեան արքայատան վերջին թագաւորը հայերին կրօնափոխ անելու եւ իսլամը պարտադրելու ջանքերը ի դերեւ են անցնում, նա որոշում է հայերի նկատմամբ սանձարձակ բռնութիւններ եւ հալածանքներ, հրաման է առաքում, որ հայերը հասարակական վայրերում իրաւունք չունեն յայտնուելու շքեղ զգեստներով, այլ պէտք է հագնեն ցնցոտիներ կամ՝ «Ի վերայ թիկանց ձգեսցեն զկապերտ հին», գլխներին դնեն պատառոտուած գլխարկ, որպէսզի տարբերուեն մուսուլմաններից: Նրանց արգիլւում էր շուկայ գնալ ձիով եւ առհասարակ յայտնուել ձի հեծած: Անձրեւոտ օրերին իրաւունք չունէին*

Շար.ը էջ 17

# «ՄԵՐ ՏՈՒՆԸ ԾԱԽՈՒ ՉԷ՛»

Շարունակուած էջ 15-էն

*նութեան համազօր արարք մըն է այդ գիտակից հայերու յիշատակին դէմ ուղղուած՝*

*Դժբախտաբար մեր իրականութենէն ներս վերջին տարիներուն կալուածային այս հաշիւները եւ նկատառումները պատճառ կ'ըլլան որ իրենց կրթական գործունէութեամբ ծանօթ օճախներ սփիւռքի մէջ ի՜նչ ի՜նչ արդարացումներով փակուին: Ու մենք որ վարժուած ենք ճոռոմաբանութիւններ լսելու հայ դպրոցի, հայ կրթութեան եւ հայ մշակոյթի անկրկնելի դերին կարեւորութեան մասին, հիմա պարտադրաբար կը լսենք անվերջանալի եղերերգ մը անոնց չիջումը բացատրող կամ պատճառաբանող:*

*Մեզմէ ո՛չ ոք կը յաւակնի Մխիթարեան Միաբանութեան հայրերուն եւ անդամներուն հայրենասիրութեան դաս տալ: Մեզմէ ո՛չ ոք կը ստորագնահատէ անոնց աշխատանքը եւ ծառայութիւնը հայ մտքին, գիրքին, պատմութեան եւ մշակոյթին: Մեզմէ ո՛չ ոք վայրկեան մը իսկ վարանումով կը նայի անոնց կրթական վաստակին: Սակայն փաստօրէն յենուելով իրենց հաղորդագրութիւններու բովանդակութեան, մօտիկ անցեալի իրենց գործած կալուածային եւ ներդրումային սխալներուն եւ անոնցմէ բխած հետեւանքներուն, իրաւունք ունինք ըսելու թէ Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնը պէտք ունի ֆինանսական հարցերու մէջ աւելի հասուն գիտութեան եւ կարողականութեան եթէ կ'ուզէ իր գոյութիւնը պահպանել այս բարդ աշխարհի զարգացումներու լոյսին տակ: Սփիւռքի պայմաններուն մէջ մերինը չի՛ կրնար նահանջի պայքար մը ըլլալ ո՛չ ալ անցեալի աւանդներու եւ ժառանգութեան զոհաբերումը ժամանակաւոր լուծումներու փնտռտուքով:*

*********

*Հակառակ շատերուս սպասումին Հազմիէի Մխիթարեան Երկրորդական Վարժարանի կալուածի վաճառքի եւ դպրոցի «փոխադրութեան» շուրջ ստեղծուած անօրինակ տագնապը Հայ մամուլի ուշադրութեան չարժանացաւ, թէեւ Լիբանանեան մամուլի օտար ներկայացուցիչներ լայնօրէն բացատրեցին եւ մեկնութիւններ տուին այդ ուղղութեամբ:*

*Լիբանանահայ մամուլի այս հարցով պահած լռութիւնը ձեւով մը խզուեցաւ երբ հայրենի «ՇԱՆԹ» հեռուստատեսութեան կաեանը 13 Օգոստոս 2018 թուականի երեկոյեան այս նիւթի շուրջ բացատրողական յայտագիր մը սփռեց եթերէն: Այս յայտագրի ընթացքին Հազմիէի Վիեննական Մխիթարեան Երկրորդական Վարժարանի տնօրէն Հ. Յովսէփ Ծ. Վրդ. Թոփալեան հակիրճ տեղեկութիւններ տուաւ տագնապի ներկայ հանգրուանին մասին, շեշտելով թէ դպրոցը անշեղ թափով կը պատրաստուէր 2018-2019 տարեշրջանի վերամուտին եւ թէ արձանագրութիւնները յառաջ կ'ընթանային իրենց սովորական ընթացքով: Յայտագրի աւարտին լրագրող Սարգիս Արեան յաւելեալ տեղեկութիւններ եւ մանրամասնութիւններ հաղորդեց ունկնդիրներուն՝ դպրոցի կալուածի եւ շէնքերու վաճառքի մասին, շեշտը դնելով այն բացասական այն հետեւանքներուն մասին որոնց կրնան առաջնորդել նման գործառնութիւն մը:*

*Նոյն օրը «ԱՐԵՒԵԼՔ» Լրատուական գործակալութիւնը լոյս կ'ընծայէր Լիբանանահայ հասարակական գործիչ Վազգէն Նիւրբէթլեանի հետ տեղի ունեցած հարցազրոյց մը որու ընթացքին Պրն. Նիւրբէթլեան ըսած է:«Մխիթարեան վարդապետները այդ դպրոցը բանալով ուզած էին հայկական կրթօճախ մը հիմնել, եւ ոգի բռին աշխատած են որ այդ դպրոցը մէջտեղ գայ: Ներկայ վարչութիւնը կ'ուզէ ծախել կամ վարձու տալ, ինչը երկու պարագային ալ նոյն արդիւնքը պիտի տայ՝ դպրոցը պիտի պարպուի: Մենք չենք ուզեր որ դպրոցը ոչ-հայերու ձեռքը անցնի. հարցի էութիւնը այս է պարզապէս եւ պիտի աշխատինք որ հայ վարժարանը՝ հայ վարժարան մնայ»: Ու քիչ մը անդին կը յարէ:«Լաւ կ'ըլլար որ այս խնդիրը չպատահէր եւ «Ռաուտա»ի դպրոցը բանալու փոխարէն Հազմիէի դպրոցին ուժ տրուէր, այդ շինարարութեան ծախսերը հոն ծախսուէին եւ բարենորգումի վարչական կամ այլ խնդիրները միասնաբար քննարկուէին ու բոլորս արդար լուծումներու հասնէինք: Այսօր ի գործ դրուած մեթոտը դժբախ-տաբար ցաւալի է եւ արդիւնք չի տար: Փաստօրէն երկփեղկումը աւելի զօրացաւ, տեսակ մը թշնամանքի մթնոլորտ մը կայ մէջտեղը, բան մը որ ցաւալի է մեզի համար»:*

*Ուրիշներու նման ես ալ իբրեւ նախկին Մխիթարեան սան (1956-էն մինչեւ 1963 թուականի աւարտական տարին) ու ապա նոյն հաստատութեան մէջ պաշտօնավարող ուսուցիչ (1969-1974) համալսարանկան կրթութենէս ետք, շատ մեծ ցաւ, վիշտ եւ ընդվզում կ'ապրիմ ի տես այս հարցի զարգացումին: Շատերու նման ես ալ մօտէն ծանօթ եմ Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւններու ազգանուէր գործունէութեան, անոնց վիթխարի աւանդին եւ առաքելութեան ու ամէն առիթով դասախօսած եմ, գրած եմ եւ խօսած եմ այդ աւանդի կարեւորութեան մասին: Հետեւաբար, այս յօդուածը մտավախութեան մը արտայայտութիւնն է որ մեր նօսրացող մարդկային եւ նիւթական միջոցները յաճախ յումպէտս կը վատնուին անկարող եւ անկար վարչական որոշումներու պատճառով: Սփիւռքահայ ժողովուրդին տարտղնուած վիճակին մէջ ուժերու խելացի եւ խելամիտ գործածութիւնը անհրաժեշտ է եւ մեզմէ ո՛չ ոք իրաւունք ունի ընկրկելու, երբ ընկրկումի տանող այդքան պատճառներ կան: Սփիւռքի մէջ ամէ՛ն օր ականատես ենք այդ անհաւասար պայքարի գործած աւերներուն ու կացութիւնը իր ներկայ վիճակին մէջ յուսատու՛ չէ: Ամէնքս իրարհաւասար իրաւունքը ունինք մտահոգուելու եւ պարտաւորութիւնը իրարու հետ գործակցելու:*

www.massisweekly.com
Updated Every Friday

# Պատմական Գրքի Հրատարակման Առիթով

Շարունակուած էջ 16-էն

*փողոց դուրս գալու, քանի որ քրիստոնեաները «անսուրբ ազգ են» եւ նրանց թաց շորերը դիպչելով մահմեդականներին, կարող են պղծել նրանց: Հրամայուեց նաեւ, որ հայերը պարտաւոր են քարշ տալ մահապարտ սպանուածների դիակները «իբրեւ գործ անարգ յամօթ եւ նախատինս ինքեանց»: Հայերին կրկնակի նուաստացնելու միտումով՝ նրանց վրայ դրուեց «կուտի հարկ» արքունական հաւերին կերակրելու համար: Մունետիկների միջոցով ի լուր բոլորին ազդարարուեց, որ ով թէկուզ մէկ հայի հաւատափոխ անի, նրան «թագաւորն զբաղում բարիս առնէ նոցա եւ կատարէ զամենայն խնդիրս նոցին»: Ստեփանոս Երէցը իր աշխատասիրութեան աւարտին Էջմիածնի կաթողիկոսին ուղղուած՝ «Խօսք երջանիկ առաջնորդին» գրում է՝ «...Նոյնպէս եւ ինքս նկատեցի եւ տեսայ, թէ մեր խեղճ եւ անպաշտպան հայ ազգը ինչպիսի վիշտ եւ նեղութիւն է կրել անցած ձախորդաբեր ժամանակներում եւ ներկայում, այնքան որ ո՛չ թուղթն է բաւական շարադրելու համար եւ ո՛չ մելանը գծելու, ո՛չ գրիչ գրելու եւ ո՛չ էլ լեզուն ճառելու այն նեղութիւնների քանակը, որ կրեց մեր տառապեալ ազգը...»:*

*Ստեփան Երէցը իր 37-րդ պրակի մէջ խնդրագիր հատուածում գրում է՝ «Իմ անթիւ եւ բազմակոյտ յանցանքների պատճառով այդ ամենն իմ աչքերով տեսայ, եւ վշտացած սրտով, արտասուաթոր աչքերով եւ հառաչանքով գրեցի մատեանում ապագայում իմացուելու համար, որ ընթեռնելով եւ մտածելով հոսեն ձեր հաճոյական աղօթքները իմ շիրիմի եւ իմ չորացած ոսկորների վրայ»:*

*Երէկ եւ այսօր*

*Մեր հայութեան անցեալի ողբալի վիճակը արդիւնքն է մեր թուլութեան, ստրկամտութեան, օտարներին հաւատք ընծայելով եւ նրանց ծառայելով առանց նկատի առնելով մեր ժողովրդի եւ հայրենիքի շահերը, թշնամու նկատմամբ նրա դէմ գլուխ ծռելը. Հայրենասիրութեան եւ ազգասիրութեան պակասը, հայրենիքի հողային տարածքների կորստի նկատմամբ անտարբեր լինելը, դժուարութեանց ու վտանգի դէպքում հայրենիքից արտագաղթելը, որոնց մասին բազում անգամներ արձանագրել է մեր պատմութիւնը եւ նոյնն էլ շարունակւում է այսօր ցաւօք, մեր օրերի Արցախի պարագայում օտարների կամքը կատարելը, երբ պիտի ուշքի գանք, յուսով թաւշեայ յեղափոխութեան կառավարութիւնը խորանալով մեր անցեալի եւ ներկայ ժամանակների սխալների մէջ, կը սրբագրի եւ կը քայլի հայրենիքի եւ հայ ժողովրդի շահերի ապահովման լոյսի ներքոյ՝ հզօրութեան նպատակասլաց քաղաքականութեամբ:*

*Բաւարարուենք այսքանով, կ'ուզէի աւելի ընդարձակուել եւ խորանալ պրֆ. Բայբուրդեանի գրութեան մէջ, սակայն նկատի առնելով գրքի գոյութիւնը, զայն ձեռք բերել եւ առաւել մանրամասն տեղեկանալ հեղինակ պատմաբանի այն դարերի իրադարձութիւնների մասին:*

*Կարդալով Պրոֆեսորի խորագնին վերլուծականը լաւապէս պատկերացրի «Պատմագրի» մեր բռնագաղթեցուած իրանահայութեան կրօնի, ազգութեան պատճառով տառապանքների, նեղութեանց եւ զրկանքների մասին, սակայն այսօր առաջ նայելով փառք ու պատիւ տալով նրանց եւ երախտագիտութեան աղօթքով մոմ եմ վառում նրանց յիշատակին, որ ծով դժուարութիւնները, տառապանքներն ու զրկանքները չընկճեցին եւ չյուսահատեցրին նրանց, այլ անխախտ հաւատքով մեր արժէքների՝ լեզուի, հաւատքի, մշակոյթի, հայրենիքի եւ ազգի նկատմամբ համբերատար եւ վառ յոյսերով հայրենիք վերադառնալու երազանքներով ապրեցին իրենց հայեացքը ընդմիշտ դէպի Էջմիածին եւ Հայաստան, շատ-շատեր հայրենիքի կարօտով շիջեցին օտարութեան մէջ, սակայն նրանց ոգին վառ փոխանցուեց գալիքներին, այսպիսով մենք նրանց հայեցի դաստիարակութեան շնորհիւ կառչած մնալով նոյն՝ մեր պապերի ոգուն մեր երեսը պարզ ու պայծառ Հայաստան աշխարհի եւ ընհանուր հայութեան մօտ:*

# Հրայր Ճէպէճեանի «Սփիւռքահայ Կեանքեր Ինչպէս Որ Տեսայ» Գիրք

Շարունակուած էջ 14-էն

*եւ Տիկին Ճէպէճեանները գիրքերէն եկած հասոյթը յատկացուցին Առաջնորդարանի կառուցման ծրագրին: Ցիշատակելի երեկոն աւարտեցաւ Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբի կազմակերպած ճոխ հիւրասիրութեամբ: Զանազան Հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ 70ի հասնող հայորդիներ մեծ գոհունակութեամբ մեկնեցան սրահէն առաջարկելով գաղութին մէջ աւելցնել նման բարձրորակ ձեռնարկներու թիւը:*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Ունաի Էմերին ու «Արսենալի» Մամուլի Քարտուղարը՝ «Ղարաբաղի» Դէմ Հենրիխ Մխիթարեանի Խաղալու Մասին




Լոնտոնի «Արսենալի» մամուլի ծառայութիւնն անդրադարձել է Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանի մասնակցութեանն ատրպէյճանական «Ղարաբաղի» դէմ Եւրոպայի լիգայի հանդիպմանը, որը կայանալու է Պաքուում:

«Խաղացողների անվտանգութիւնը միշտ առաջնային է: Մենք կը հետեւենք իրավիճակին եւ այդ հարցով որոշում կը կայացնենք ֆուտպոլիստի հետ զրուցելուց յետոյ»,- «Արսենալի» մամուլի քարտուղարի խօսքը մէջբերում է Daily Mail-ը:

Այդ հարցով խօսել է նաեւ «Արսենալի» գլխաւոր մարզիչ Ունաի Էմերին:

«Կը ցանկանայի, որ Մխիթարեանը լինէր մեզ հետ, սակայն ես այդ հարցով դեռ չեմ զրուցել նրա հետ»,- ասել է սպանացի մասնագէտը:

Յիշեցնենք, որ Օգոստոսի 31-ին տեղի էր ունեցել Եւրոպայի լիգայի խմբային փուլի վիճակահանութիւնը: «Արսենալի» մրցակիցներն են Լիսաբոնի «Սպորտինգը», Ատրպէյճանի «Ղարաբաղը» եւ Ուկրաինայի «Վորսկլան», որի կազմում խաղում է Հայաստանի հաւաքականի թեկնածու Գեղամ Կադիմեանը:

2015-ին Մխիթարեանը Դորտմունդի «Բորուսիայի» կազմում չէր մասնակցել «Գաբալայի» դէմ Ատրպէյճանում տեղի ունեցած Եւրոպայի լիգայի խաղին, իսկ Գերմանիայում գրաւել էր ատրպէյճանական թիմի դարպասը:

## «Արսենալի» Յաղթանակը Ուելսում



Անգլիայի առաջնութեան չորրորդ տուրում Լոնտոնի «Արսենալը» Ուելսում մրցեց «Կարդիֆի» հետ: Սպանացի Ունաի Էմերիի գլխաւորած թիմը յաղթեց 3:2 հաշուով:

Երկու անգամ «Արսենալն» առաջ անցաւ հաշուի մէջ, ուելսցիները երկու դէպքում էլ կարողացան վերականգնել հաւասարութիւնը: Լոնտոնցիների կազմում աչքի ընկան գերմանացի պաշտպան Շկոդրան Մուստաֆին եւ գաբոնցի յարձակվուող Պյեր-Էմերիկ Օբամեեանգը: Վերջնամասում հիւրերի յաղթանակն ապահովեց ֆրանսացի յարձակուող Ալեքսանդր Լիակազեթը:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Արսենալի» պահեստայինների թւում էր եւ 89-րդ րոպէին փոխարինեց Օբամեեանգին:

## Մեսի. «Ռեալը» Շատ Բան Է Կորցրել Ռոնալդուի Հեռանալուց

«Բարսելոնայի» արժենտինացի յարձակուող Լիոնել Մեսին խոստովանել է, որ իր համար անսպասելի է եղել պորտուգալացի հյարձակվուող Կրիշտիանու Ռոնալդու տեղափոխութիւնը Մադրիդի «Ռեալից» Թուրինի «Յուվենտուսից»:

«Անկեղծ ասած՝ չէի սպասում, որ Կրիշտիանուն կը հեռանայ «Ռեալից»: Մադրիդեան ակումբը շատ բան կորցրեց Ռոնալդուի հեռանալուց: Ես նրա նկատմամբ շատ ակումբների հետաքրքրութեան մասին էի լսել, բայց «Յուվենտուսը» ամենաքիչ հաւանական տարբերակն էր: Ես իսկապէս զարմացայ, բայց «Յուվենտուսն» ունի շատ լաւ կազմ:

Իհարկե, «Ռեալում» կան նաեւ այլ գերազանց խաղացողներ, եւ ակումբը կը շարունակի պայքարել բոլոր տիտղոսների համար: Առանց Ռոնալդուի նրանց համար աւելի բարդ կը լինի, իսկ «Յուվենտուսը» կը դառնայ Ախոյեանների լիգայի ակնյայտ ֆավորիտներից մեկը»,- Մեսիի խօսքը մէջբերում է Mundo Deportivo-ն:

Յիշեցնենք, որ 2009-2018 թուականներին «Ռեալում» հանդէս եկած Ռոնալդուն Իտալիայի ախոյեանի հետ կնքել է չորս տարուայ պայմանագիր:

## Լեւոն Արոնեանն Առաջադիմել է. ՖԻԴԷ

Շախմատի միջազգային ֆեդերացիան (ՖԻԴԵ) հրապարակել է Օգոստոսին տեղի ունեցած պարտիաների արդիւնքում շախմատիստների վարկանիշային աղիւսակը: Հայկական շախմատի առաջատար Լեւոն Արոնեանը 13-րդ տեղից բարձրացել է 6-րդ տեղ՝ գործակիցը 2767-ից հասցնելով 2780-ի: Առաջատարը աշխարհի ախոյեան, նորվեգացի Մագնուս Կարլսենն է՝ 2839: Տասնեակում են նաեւ ֆրանսիացի Մաքսիմ Վաշիէ Լագրավը, հոլանդացի Անիշ Գիրին, ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկը, ամերիկացի Ուեսլի Սոն եւ հնդիկ Վիշվանաթան Անանդը:

## Աստղիկ Յակոբեանը՝ Շախմատի Եւրոպայի Մինչեւ 14 Տարեկանների Փոխախոյեան




Ռիգայում աւարտուած Եւրոպայի պատանեկան առաջնութիւնում հիանալի յաջողութեան հասաւ Աստղիկ Յակոբեանը: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ մինչեւ 14 տարեկան աղջիկների ենթախմբում հանդէս եկող Յակոբեանը 9 հնարաւորից վաստակեց 7 միաւոր եւ արժանացաւ արծաթէ պարգեւի: Յակոբեանը նաեւ 130 կէտով բարելաւեց իր անհատական վարկանիշը: Աւելացնենք նաեւ, որ այս յաջողութիւնը արդէն երրորդն է Աստղիկի համար այս տարում: Յունիսին պատանի շախմատիստուհին հիանալի ելոյթ էր ունեցել «Սպիտակ նաւակ» մրցաշարում, Յուլիսին յաղթող դարձել Հայաստանի կանանց 74-րդ առաջնութեան 1-ին խմբի մրցաշարում: Աստղիկ Յակոբեանի մարզիչն է գրոսմայստեր Գէորգ Յարութիւնեանը: Մինչեւ 16 տարեկան տղաների ենթախմբում յաջող հանդէս եկաւ Արմէն Բարսեղեանը, ով 9 հնարաւորից վաստակեց 7 միաւոր եւ կիսեց 2-5-րդ հորիզոնականները: Ցաւօք, մարզական բախտը Արմէնի կողմը չէր. լրացուցիչ ցուցանիշների հաշուարկից յետոյ մեր շախմատիստը յայտնուեց 5-րդ հորիզոնականում: Մեդալ նուաճելու հիանալի հնարաւորութիւն ունէր նաեւ մինչեւ 10 տարեկանների ենթախմբում հանդէս եկող Ռուդոլֆ Փաշիկեանը, ով մրցաշարի մեկնարկից մինչեւ վերջին տուրը գլխաւորում էր աղիւսակը, սակայն վերջին տուրում պարտութիւն կրեց եւ 7 միաւորով գրաւեց 4-րդ հորիզոնականը: Մետալների համար պայքարում էր նաեւ մինչեւ 16 տարեկան աղջիկների ենթախմբում հանդէս եկող Աննա Խաչատրեանը, սակայն վերջին տուրում կրած պարտութիւնից յետոյ Խաչատրեանը յայտնուեց 10-րդ հորիզոնականում: Մինչեւ 18 տարեկան տղաների ենթախմբում հանդէս եկող Դաւիթ Միրզոյեանը 6 միաւորով գրաւեց 8-րդ տեղը: Ընդհանուր առմամբ, մեր 18 մասնակիցներից 15-ը բարելաւեցին իրենց անհատական վարկանիշները:

## Անտուան Գրիզմանը Եւրոպա Լիգայի Նախորդ Մրցաշրջանի Լաւագոյն Ֆուտպոլիստը




Մոնակոյում կայացել է Եւրոպա լիգայի նոր մրցաշրջանի խմբային փուլի վիճակահանութիւնը: Արարողութեան ընթացքում յայտարարուել է նաեւ նախորդ մրցաշրջանի լաւագոյն ֆուտպոլիստի անունը: Մրցանակը ստացել է Անտուան Գրիզմանը, ով «Աթլետիկոյի» հետ դարձել է գաւաթակիր:

## ՖԻՖԱ-ի՝ Տարուայ Լաւագոյն Դարպասապահի Կոչման 3 Յաւակնորդները

ՖԻՖԱ-ն «Թուիթերի» իր պաշտօնական էջում յայտնել է այն երեք դարպասապահների անունները, ովքեր յաւակնում են տարուայ լաւագոյնի կոչմանը: Թեկնածուների վերջնական ցուցակում ընդգրկել են Տիբո Կուրտուան (Բելգիայի հաւաքական, «Չելսի»/«Ռեալ»), Ուգո Լիորիսը (Ֆրանսիա, «Տոտենհեմ») եւ Կասպեր Շմեյխելը (Դանիա, «Լեսթեր Սիթի»): Աշխարհի 2018 թուականի առաջնութեան ժամանակ Կուրտուան Բելգիայի հաւաքականի կազմում արժանացել է պրոնզէ մետալներին, ինչպես նաեւ ճանաչուել մրցաշարի լաւագոյն դարպասապահը: Լիորիսը, իր հերթին, Ֆրանսայի հաւաքականի հետ դարձել է աշխարհի ախոյեան: Շմեյխելը Դանիայի հաւաքականի հետ յաղթահարել է մրցաշարի խմբային փուլի արգելքը, սակայն քառորդ եզրափակչում յետխաղեայ 11-մեթրանոց հարուածաշարում պարտուել է Խորուաթիային՝ մունդիալի ապագա փոխախոյեաններին:

## Հայկ Իշխանեանը Հրաւիրուել է Հայաստանի Ազգային Հաւաքական




Հայաստանի ֆուտպոլի ազգային թիմի գլխաւոր մարզիչ Վարդան Մինասեանը եւս մէկ ֆուտպոլիստ է հրաւիրել հաւաքական: Այս մասին «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՖՖ-ից: Հայաստանի ազգային հաւաքական է հրաւիրուել «Գանձասար-Կապանի» պաշտպան Հայկ Իշխանեանը: «Փիւնիկի» կիսապաշտպան Ալիկ Առաքելեանը ընդգրկուել է Հայաստանի Մ-21 հաւաքականի կազմում: Ֆուտպոլի ազգային թիմը Ազգերի լիգայի շրջանակներում Սեպտեմբերի 6-ին կը հիւրընկալի Լիխտենշտեյնին, իսկ Սեպտեմբերի 9-ին կը հիւրընկալուի Մակեդոնիային:

## ՄԱՀԱԶԴ



***ՅՈՎՀԱՆ ԳՐՔՈՋԵԱՆԻ***
*1953 Պէյրութ –2018 Արիզոնա*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ ամուսնոյն, եղբօր, հօրեղբօր եւ հարազատին* ***ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐՔՈՋԵԱՆԻ*** *մահը որ պատահեցաւ Շաբաթ, 1 Սեպտեմբեր, 2018ին առաւօտեան ժամը 10:00ին, Արիզոնա նահանգին մէջ յետ կարճատեւ հիւանդութեան: Յուղարկաւորութեան Տան կարգը տեղի պիտի ունենայ առաւօտեան ժամը 11:30ին:*

*Սգակիրներ՝*

*Այրին՝ Տիկ. Սոնա Գրքոչեան եւ զաւակներ Պէնոն եւ Արփինէ*

*Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Սոնա Կաճոյեան*

*Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Մարինա Գրքոչեան եւ զաւակները*

*եւ համայն Գրքոչեան, Մութաֆեան, Կաճոյեան, Ոսկերիչեան, Քիւրքճեան, Կիրակոսեան, Տումատ եւ Գամար ընտանիքները, հարազատներ եւ բարեկամներ:*

# Պատմական Աղաւաղումներ Հայոց Պատմութեան Դասագրքերում

Շարունակուած էջ 8-էն

*կապում Թիւրքական պետութեան հետ:*

*Ուստի գտնում ենք, որ հայ քաղաքական շրջանակներին պէտք չէ մէկ կէտով ներկայացնել, այլ անհրաժեշտ է ներկայացնել նրանց դիրքորոշումներն ու գործողութիւնները զատ-զատ:*

«Պատասխանատուները» հատորից, Պէյրութ, 1974, էջ 79-80):

Թուրքական բանակում մեծ թւով հայ զինուորներ կային: Նրանք գիտէին այն վիճակը, որ ստեղծուել էր իրենց, իրենց ծնողների եւ ընտանիքների համար դեռ տանը եղած ժամանակ: Իթթիհադի, թուրքական կառավարութեան, թրքութեան միտումներին իրենք շատ լաւ ծանօթ էին, մանաւանդ, որ Բալկանեան պատերազմի ժամանակ փորձով տեսել էին, թէ իրենց ինչ վիճակ է սպասում տիրապետող տարրի կողմից...

... «Իտտիհատ»-ի մի քսութիւնը «Իտտիհատ»-ը կարծում էր, որ Հայ Յեղափոխականները կարող էին միւսների հետ միաւորուել եւ հարուած հասցնել: Բայց նրանք փորձեցին երկպառակութիւն սերմանել Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան միջեւ: Նրանք սուտ լուրեր էին տարածել, բայց շուտով ամէն բան պարզ է դառնում: «Իտտիհական»-ների լարած դաւը ջուրն է ընկնում եւ չեն կարողանում այս անգամ իրենց սեւ նպատակին հասնել եւ 2 կուսակցութիւնների միջեւ արյոիւնալի բախում առաջ բերել:

Հայերի համագործակցութիւնը «Իտտիհատ»-ի հետ Ինչ էլ որ ասուի, ինչ պատճառաբանութիւն էլ բերուի, այն անզօր է գործած ամենամեծ սխալը մեղմելու համար: Հ. Յ. Դաշնակցութիւնը գործեց պատմութեան ամենամեծ սխալը. դա այն պայմանագրութիւնն էր, որ նա կնքեց «Իտտիհատ»-ի հետ՝ նրա հետ համագործակցելով: Դրանով ոչ միայն «Իտտիհատ»-ը հայերի մէջ մի նեցուկ ունեցաւ, այլեւ այն, ինչն ուղղակի անել չկարողացաւ, արեց Դաշնակցութեան միջոցով: «Իտտիհատ»-ը ջանաց միայն Դաշնակցականներին ճանաչել հայ ազգը քայքայելու գործում: Անիրաւ է կուսակցութիւնը մի ամբողջ տեղ ընդունելը: Դաշնակները մեծ ներդրում ունեցան իտտիհատականների հզօրացման մէջ: Նրանց պատասխանատուութիւնը մեծ էր գայլի ուժեղացման մէջ. սա անուրանալի փաստ է եւ ոչ մի պատճառաբանութեամբ չի կարելի արդարանալ: Ահա պատմական այն մեծ սխալը, որ մի հայ կուսակցութիւն գործում էր՝ իր կուսակցութեան շահը ազգային շահից վեր դասելով: Այս ամէնից տուժեց եւ՛ հայ յեղափոխական գաղափարը, եւ՛ հայ ազգը յատկապէս:

*էջ 127. «Յունիսին Կ. Պոլսում կեղծ ամբաստանութիւնների հիման վրայ ձերբակալւում եւ մահապատժի են ենթարկւում Հնչակեան կուսակցական նշանաւոր գործիչ Փարամազը (Մաթէոս Սարգսեան) եւ իր 19 կուսակցական ընկերները»:*

«...Բալքանեան վերջին պատերազմից յետոյ սաստիկ թուլացած Թուրքիան կծկւում եւ աւելի ասիական պետութիւն է դառնում՝ բոլորովին կորցնելով իր նախկին դիրքը: Գերմանական՝ արեւելեան քաղաքականութիւնը բոյն է դնում Բոսֆորի ափերում եւ Թուրքիան գլխով-ոտքով ընկնում է նրա գիրկը: Թուրք ժողովրդի ստուար մեծամասնութիւնը այլեւս չի հաւատում իր քաղաքական գոյութեան շարունակութեանը: Երկրում ներքին երկպառակութիւն եւ խռովութիւն էր: Իտտիհատականութիւնն ու Իթիլաֆականութիւնը իրար մահու երդումներ էին տալիս: Համաեւրոպական այդ խառնաշփոթի մէջ՝ Իտտիհատական կառավարութիւնը, առիթից օգտուելով, իր ձեռքերն ազատ է արձակում՝ ուզածն անելու: Հայաստանը ծայրից վերածւում է արեան թատերաբեմի՝ լցուած առեւանգութիւններով, սպանութիւններով, կողոպուտով: Օգնութիւն չկայ ոչ մի տեղից: Այդ ժամանակ էր, որ կռուի պատնէշ բարձրացաւ նորից Հնչակեանութիւնը: Եօթներորդ ընդհանուր պատգամաւորական ժողովը կայացաւ 1913-ի Սեպտեմբերի 7ին: Ժողովի որոշումները՝ 1. Հնչակեան կուսակցութեան դիրքը Թուրքիայում Որոշում ընդունուեց, որ Սոցիալ-դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը սահմանադրական Թուրքիայի հանդէպ անջատողական չլինէր եւ կանգնէր օրինական հողի վրայ՝ այդպիսով առաջ տանելով իր կուսակցական գործունէութիւնը: 2. Ընդհանուր եւ մասնակի բարենորոգումներ. Քաղաքական Ինքնավար Հայաստան Որոշում ընդունուեց պաշտպանել Քաղաքական Ինքնավար Հայաստանի գաղափարը, որպէս միակ միջոց՝ Հայաստանում ապրող թէ հայերի եւ թէ այլազգիների հաշտ, խաղաղ ու անվրդով զարգացում ու առաջադիմութիւն: 3. Միջկուսակցական յարաբերութիւններ Որոշում կայացուեց՝ խստիւ արգելել իր բոլոր Գործադիր մարմիններին որեւէ համագործակցութիւն ունենալու Իտտիհատի հետ, եւ խրախուսել վերջինիս ամէն միջոցներով տապալելն ու մէջտեղից հանելը: 4. Կուսակցական շրջանային փոխյարաբերութիւններ Որոշում կայացուեց կուսակցութեան՝ Ռուսաստանի, Կովկասի, Բուլղարիայի, Ռումինիայի, Եգիպտոսի, ինչպէս եւ Ամերիկայի իր բոլոր կազմակերպութիւններին պարտաւորեցնել, որ այս օրերում նրանք՝ իրենց գործունէութեամբ ֆիզիքապէս, բարոյապէս եւ նիւթապէս նախապատուութիւն տան Տաճկա-Հայաստանին: Երկիր մտցուեցին նշանաւոր գործիչներ, ականաւոր պրոպագանդիստներ եւ յայտնի մարտիկ ուժեր: Մեր յեղափոխական, ապստամբական շարժումը շատ մեծ յաջողութեամբ առաջ էր գնում, երբ վրայ հասան առաջին ձերբակալութիւնները: Թէեւ հայ յեղափոխական ուժերը չկարկամեցին, այնուամենայնիւ Թուրքիան կոնկրետ ռազմական գործողութիւնների անցաւ: Ու 1915- Պատասխանատու եղան նրանք, ովքեր բարոյական նիւթական, մարտական պարտականութիւն չստանձնեցին, թշնամու ուժը տկարացնելու, ձախձախելու գործում բաժին չունեցան: Պարտաճանաչ էր միայն նա, ով անցեալում էր իր պարտականութիւնը կատարել:

**-Ստեփան Սապահգիւլեան, «Պատասխանատուները»:**

********************

*Ահա այս վերջին մէջբերմամբ սահմանափակուենք:*

*Վերջին մէջբերման մասին միայն կարելի է ասել, որ ցաւալի է, երբ ոչ միայն առկայ է սխալմունք, այլեւ նիւթը ներկայացւում է հպանցիկ ու հայոց պատմութեան մի ամբողջ հերոսական էջ անտեսւում է: Չէ որ սա միայն կուսակցութեան պատմութիւն չէ, այլ մեր ազգի պատմութիւնն է, կուսակցութիւնը իր հերոսներին իր համար չի ծնել, այլ բովանդակ հայութեան եւ այսօր կարիք չի զգում պատմութեան զեղծարարութեան կամ կուսակցականացման:*

*Մենք վաղուց անցել ենք պատմութեան կուսակցականացման էտապը եւ այն թողել խորհրդային շրջանում:*

*Ի յաւելումն նաեւ նշել է պէտք, որ դասագրքերում չափազանցութեան են հասցուած գեղարուեստական երանգաւորումները, ինչը կարող է աշակերտին խանգարել առաջնայինի եւ երկրորդականի ընկալման հարցում: Նաեւ զերծ մնալ է պէտք եզրայանգումներ պարտադրելուց, յատկապէս, երբ խօսքը պատմական ներքաղաքական զարգացումների ու գաղափարախօսութիւնների մասին է, վստահեցնում ենք, որ հայ աշակերտներն ունեն բաւարար ունակութիւններ ինքնուրոյն եզրայանգումներ կազմելու, եթէ նրանց տրամադրուի բաւարար պատմական տեղեկատուութիւն:*

*Այսպիսով կրկին անգամ դիմում ենք Ձեզ՝ միջոցներ ձեռք առնելու տրուած թերութիւնները շտկելու կապակցութեամբ:*

*Յարգանքներով*
*«Տխրունի» Ուսանողական-Երիտասարդական Միութիւն*
*Ատենապետ՝ Ռ. Ստեփանեան*
*Փոխատենապետ՝ Ե. Պօղոսեան*


## AMAA Centennial Banquet

**Los Angeles – October 20, 6 pm , AMAA Centennial Banquet at Biltmore Hotel will honor Benefactors Stephen Philibosian and Conte Foundations, Sheen Family Trust, Gerald and Patricia Turpanjian, TF Educational Foundation. Kenneth Khachigian, Master of Ceremonies . For more information call Levon Filian 626.487.5878 or the AMAA Office 201.265.2607 or e-mail mpoulos@amaa.org**



# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 125,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**
**Name: ---------------------------------------------**
**Address: -----------------------------------------**
**City: --------- State:--------- Zip Code:------**
**Country: --------------**
**Tel :----------------------- Email: -------------------------**

SPONSORS

COUNTY OF LOS ANGELES CALIFORNIA

CUSTOM PROBIOTICS
High Potency Acidophilus and Bifidus Dietary Supplements
www.CustomProbiotics.com

DIN Diagnostic Imaging Network

Vrej Pastry

UMPQUA BANK

Glendale West Pharmacy and Medical Supply

ARMENIAN COUNCIL OF AMERICA

ՀՄԸՄ HOMENMEN 1921

ԹԱՄԱՐԱ TAMARA

ՄԱՍԻՍ
www.massispost.com

AABC

HIGH VISION

FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

# ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ Փառատօն

## SUNDAY SEPTEMBER 23, 2018

## VERDUGO PARK GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206

Starting at 11:00 am

Կազմակերպութեամբ Organized By
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

**Live Music & Dancing**
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
**Art Work Exibition**
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ եւ ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ
**Kids Games**
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
**Armenian Food**
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

GENERAL SPONSOR
INNOVATIVE Designs & Manufacturing, Inc.
By TED & NORA KOROGHLIAN

To reserve your vendor booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք
Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938